Շնորհակալություն գիրքը «Կաճառ» Գիտական Կենտրոնի էլեկտրոնային գրադարանից ներբեռնելու համար

Հաճելի ընթերցում

**Թարգմանեց և կազմեց Աշոտ Հարությունյանը**

# ԽՐԱՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

ԽՐԱՏԱՆԻ (ՈՂՋԵՐԹ) ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

1933

Ժողովուրդների բարեկեցությունը ձևավորվում է մեկ անձի շուրջ: Սրա բազմաթիվ օրինակներ կան պատմության ընթացքում՝ տարբեր ոլորտներում: Շատերն այս անկասկածելի երևույթը կվերագրեն անհատին, որպես այդպիսին: Այդպես կվարվեն կարճատեսները, բայց ավելի հեռատեսները հասկանում են, որ նման կուտակողները ոչ այլ ինչ են, քան Հիերարխիայի ուժը:

Իրոք, բոլոր երևույթների համար Հիերարխիան ընտրում է այնպիսի կիզակետ, որին կարող է ուղղորդվել հոսանքը: Բացի այդ, այս կարգի անձն ունի գիտակցված կամ անգիտակից հուր, որը հեշտացնում է հաղորդակցությունը: Բայց անհրաժեշտ է մեկ այլ որակ ժողովրդի կողմից. անհրաժեշտ է վստահություն և ուժի գիտակցում: Այս որակը անհրաժեշտ է որպես հրե մեքենայի օղակ:

Դուք ինքներդ եք տեսնում, թե ինչպես են աճում այն ժողովուրդները, որոնք հաստատվել են Առաջնորդողի վրա: Դուք ինքներդ եք տեսնում, որ այլ ուղի չկա: Այսպիսով, պետք է գիտակցել Հիերարխիայի օղակը: Պետք չէ կարճատես լինել:

## Խրատանի առաջնորդին

1. Առաջնորդը կանգնած է կատարի վրա, որը վայրէջք չունի: Գտնել հակադրությունների միջև սահմանը կարող է միայն ծնված Առաջնորդը : Այդ գաղտնի սահմաններից են հյուսված հաղթանակների գորգերը : Ամեն օր, ամեն ժամ գաղտնիքների գործվածք է փռվում Առաջնորդի առաջ: Ահա նրա առջև ներողամտություն է կամ թողտվություն: Իհարկե, առաջինից ծնվում է երկրորդը, բայց նրանց միջև ընկած է Արդարության Թուրը: Չէ որ , ներողամտությունը Լույսից է, իսկ թողտվությունը՝ խավարից : Դրանք բաժանող կատարի վրա ձգված է Առաջնորդի Թուրը: Նեղ է տեղը, որտեղ Թուրը կարող է ձգվել: Նույն ձև, նեղ է եզրը քաջության և դաժանության միջև: Միայն Առաջնորդի սիրտը գիտի, թե որտեղ են այս եզրերը: Մեծ Խորհուրդներով չէ դրսևորվում Արդարության սահմանների առեղծվածը . ողջ կյանքում նույն հանելուկներն են, ուստի Առաջնորդի համար չկա ոչ փոքր , ոչ էլ՝ մեծ: Առաջնորդի ուշադրությունը հավասարապես սևեռված է բոլոր որոշումների վրա: Ասպարեզում առաջնորդն հայտնվում է առանց խորհուրդ հարցնելու, բայց կարող է խորհուրդներ ընդունել: Առաջնորդը չի հապաղում, բայց ոչ ոքի չի ուշացնում: Նա առավելություն ունի հայտնվել անսպասելիորեն և պատկերացնում է, թե որքան ժամանակ կպահանջվի յուրաքանչյուր առարկայի համար: Նա չի վշտանում զրպարտությունից, բայց գիտի ինչպես կիրառել յուրաքանչյուր բառ: Նա անկաշառ է, քանի որ երկրային հարստություն չի հավաքում: Նա գիտի ձայնի և գույնի նշանակությունը ՝ որպես մարդկային սրտերի բժիշկ: Նա կարողնում է ուրախանալ ճշմարտությամբ, բայց մերժում է պատրանքը: Այսպիսով, Առաջնորդի ճանապարհը Ճշմարտության ուղին է:

2. Ոգու անկումը բնորոշ չէ Առաջնորդին , բայց թունավորված մթնոլորտի ճնշումը կարող է ազդել ուժեղ գիտակցության վրա, ուստի նույնիսկ ամենահզորը չպետք է մնա առանց տիեզերական աջակցության: Ինչի՞ կարող է հասնել Առաջնորդը, եթե կտրվել է փրկարար կապից: Հենց Առաջնորդը, որը ընդունել է առաջնորդության բեռը, պետք է կցվի Բարձրագույն Աշխարհի Սանդուղքին: Հենց նա է, որ իր սրտագին աշխատանքի ընթացքում

պետք է անընդհատ իրեն զորացնի Բարեշնորհության արտանետումներով: Նա հաճախակի պետք է դիմի Հիերարխիային մասնավոր խոսակցությամբ և պետք է հաշվի առնի ուղարկված բոլոր նշանները, որոնք տզետների համար միայն սնահավատություն են: Ինչքան օգտակար դիտարկումներ են ոչնչացվում թյուրըմբռնմամբ, թե ինչ է իրական սնահավատությունը: Մարդիկ երբեմն սնահավատություն են անվանում պարզապես բաց աչքերը,բայց Առաջնորդը պետք է վեր լինի սնահավատությունից և նախապաշարմունք-ներից: Պատկերացրեք, թե ինչպես կփոխվեր կյանքը, եթե հանվեին բոլոր նախապաշարմունքները, կանխակարծությունները և կանխամտածված որոշումները: Երկրային դատավորներն են, որ պետք է շատ ծանր կարմա վերապրեն:

3. Կարիք չկա նախանձել Առաջնորդին, քանի որ նա իր վրա է վերցնում կյանքի ողջ բեռը: Կարելի է հիշել, թե ինչպես մի Հաղթողի հետ հանդիպելիս մի պառավ կին դառնորեն լաց եղավ: Երբ նրան հարցրին - որտեղի՞ց են արցունքները ՝ ընդհանուր ուրախության պահին: Նա ասաց. «Ես իսկապես շատ եմ խղճում Նրան»:

4. Կարող են հարցնել, թե ինչու՞ Խոսում եմ Առաջնորդի, և ոչ թե իշխանավորի մասին: Տարբերությունը նրանց միջև ահռելի է: Կառավարիչը ենթադրում է ներկան և, կարծես, կառավարում է արդեն գոյություն ունեցողը, բայց Առաջնորդը, բառի բուն իմաստով, բացահայտում է ապագան: Նա չի ստացել այն, ինչ արդեն ձևավորված է, բայց տանում է, և նրա յուրաքանչյուր գործողություն առաջ է մղում: Կառավարիչը գիտի արդեն կազմավորվածը, ավարտվածը, բայց Առաջնորդը չունի այն, ինչ ավելի վաղ էր հաստատվել, և պետք է ժողովրդին առաջնորդի դեպի Կատարելության Լեռը: Եթե տիրակալի բեռը մեծ է, ապա Առաջնորդի պատասխանատվությունն էլ ավելի մեծ է, բայց մյուս կողմից ՝ Բարձրագույն ՈՒժերը հաստատում են Իրենց Գահն այնտեղ, որտեղ առաջնորդության նշաններ կան: Միայն Առաջնորդը պետք է տարբերակի կեղծավորությունն ու անկեղծությունը: Սրտի առաքինության դրսևորումը խիստ տարբերվում է բռնի շողոքորթությունից, և Առաջնորդը զորություն ունի տարբերելու այս հատկությունը:

Շատերն են ընթերցել , թե ինչպես Դավիդը դիմել է Բարձրագույն ՈՒժերին: Նա դիմել է այս Աղբյուրին ՝ ավելորդ սխալներից խուսափելու համար: Ազգերի պատմության մեջ կան բազում նման օրինակներ: Բոլորն էլ գիտեն դրանց մասին: Կարիք չկա նույնիսկ սուզվել հին ժամանակների մեջ, և նորագույն իրադարձությունների մեջ տեսանելի են Հաղորդակց-ման և Բարձրագույնին Ծառայելու այս նշանները: Բայց մենք նաև գիտենք, որ Մեծ Հաղորդակցման համար անհրաժեշտ է մաքուր սիրտ: Որևէ անմաքուր անձ Հաղորդակցություն չի ստանա, ուստի Առաջնորդի Խորհրդանիշի նշան պետք է լինի սրտի մաքրությունը: Ոչ միայն գործի , այլ նաև մտքերի մեջ, Առաջնորդը բարիք է բերում ազգերին, նա գիտի, որ իրեն վստահված է բաժակը լցված բերելը, նա չի կորցնում ուղիները թափառումների մեջ, չի թափում վստահված բաժակը, այնպես որ Առաջնորդի գաղափարը Ապագայի նշան է:

5. Հիշեք, թե որքան է անհրաժեշտ մարդկանց առաջնորդի գաղափարը: Նրանք ուզում են երաշխիվոր ունենալ Բարձրագույնի առջև, նրանք հասկանում են, որ առանց կապի Ուղի գտնելն անհանրին է, բայց նրանք գիտեն, որ Առաջնորդը գալիս է: Ոչինչ երբևէ չի կարող խանգարել Առաջնորդին, եթե նա չի զսպվում երկրային դրսևորումներով, որոնք որոշում են նրա նահանջը: Առաջնորդի մաքուր ձգտումը չի կարող ճնշվել սահմանված ժամկետից այն կողմ:

6. Յուրաքանչյուր առաջնորդ, իհարկե, ճանապարհին կհանդիպի բազմաթիվ հանգամանքների, որոնք կարող են ծանրացնել նրա կարման: Սա անխուսափելի է, բայց միայն սովորական, երկրային լուծումը չի լուծի նման լարումը: Ինչո՞ւ պետք է Առաջնորդը լրացուցիչ բեռ վերցնի իր վրա, եթե նա շփվում է Բարձրագույն ուժերի հետ: Երբ նա կատարի Բարձրագույն ՈՒժերի հրամանը, նա չի ծանրաբեռնի իր կարման, բայց այդպիսի երջանիկ դիրքի համար նա պետք է լարի իր ողջ գիտակցությունը դեպի Բարձրագույն Աշխարհ: Նա պետք է ազատվի խանգարող սովորություններից և վերադաստիարակի իր կամքն ՝ այն դնելով Առաջնորդի հետ անբաժանելի կապի մեջ: Պետք է ընտելանալ նման Հաղորդակցությանը, որպեսզի այն կյանք մտնի որպես միասնական հիմք: Բացի այդ, Առաջնորդը չպետք է իմանա վրեժխնդրության, որպես ամենաանասնական զգաց-

մունքներից մեկի, մասին: Առաջնորդը վրեժ լուծելու ժամանակ չունի, երբ նա չգիտի ճմլում, քանի որ նա անընդհատ շարժման մեջ է: Բացի այդ, Առաջնորդը գիտի, որ ոչ մի տեղ խաղաղությունը չի պատվիրված որպես էներգիայի սպանում: Բացի այդ, Առաջնորդը հասկանում է, որ կասկածը ճշմարտության որոնում չէ: Յուրաքանչյուր ոք, ով նայում է հեռուն

, ձգտում է դեպի Ճշմարտություն, բայց կասկածողը հետ է դառնում, և դրանում է նրա վախճանը:

7. Անթափանց զրահը կարող է լինել մետաղից կամ մետաքսից, բայց լավագույնը՝ հրե զրահն է: Մի թե Առաջնորդը կգնա՞ նախանշված ճանապարհով առանց հրե զրահի: Այլ կերպ ինչպե՞ս զսպել չարության բոլոր նետերը և ատելության սրերը: Բայց շատ առաջնորդներ, նույնիսկ երկրային գիտակցությամբ, զգացել են, որ իրենց պահպանում է հրե զրահը: Կարելի է գրել բազում գրքեր վիճակված առաջնորդի մագնիսականության մասին: Կարելի է ընդգծել, որ ոչ արտաքինը, ոչ ձայնը, ոչ հարստությունը, այլ մեկ ուրիշ բան է, որ համոզում է ազգերին: Արդեն մեկ անգամ չէ, որ խոսել եմ սրտի Հրի մասին: Հենց այս զրահ-մագնիսն է գրավում և պաշտպանում: Ինչպես ասվել է. «Վահանով կընդունեմ բոլոր»: Բայց պետք է կռել այս վահանը: Այդ վահանը հնարավոր է ի հայտ բերել միայն Վերևից, բայց որքա՞ն մտքեր և զրույցներ պետք է ուղարկվեն, որպեսզի Հաղորդակցություն ստեղծվի և հրե զրահ կռվի: Հաղորդակցությունը կենդանի և ամենուր կայացնելու համար չպետք է կորցնել մեկ օր կամ մեկ ժամ: Իզուր են կարծում, որ գիտությունը հեռացնում է Բարձրագույն աշխարհից, այն կարող է փոխել երկրային անունները, բայց եռամիասնության էությունը մնում է որպես հիմք: Առավել ևս, Առաջնորդը կարողանում է պատկերացնել, թե որտեղ է էությունը: Միգուցե նա չի ասի անարտասանելի բառը, բայց նա կզգա նրան իր սրտում: Այդ խոսքը կօգնի Առաջնորդին չկորցնել համաշխարհայինի ընկալումը. միայն դա է հեշտությամբ տեղ հասցնում հրաշալի զրահը:

8. Առաջնորդը գիտի, որ ինքը հակադրված է խավարի ուժերին: Առաջնորդը գիտի, որ նրանց դեմ պայքարն անխնա է: Առաջնորդը գիտի, թե որքան խորամանկ են խավարի հնարքները, բայց խավարի դեմ երկու զենք ունի: Առաջինը անձնական զգոնությունն ու չափավորությունն են կյանքում; երկրորդը՝ Հաղորդակցումը Լույսի ՈՒժերի հետ՝ Նրանց ողջ Անպարտելիությամբ: Փոքր կատակ չէ դիմակայել խավարի բոլոր սարսափներին, և չի կարելի երես թեքել դրանցից: Բայց Առաջնորդը զգում է Առաջատար Ձեռքը, և ճակատամարտում այս Ձեռքի զգացողությունը հայտնվում է նրան կամ Ծնորհքի շունչ է իջնում նրա ճակատին: Առաջնորդը բաց չի թողնի Ծնորհքի նման նշանները: Առաջնորդը պետք է օգնի ժողովրդին և մաքրի ամոթխած արտահայտությունների իմաստը: Կյանքի իրարանցումը հիմնականում բխում է հասկացությունների խառնաշփոթից: Նշանակում է, որ բառերի իմաստը պարզելու համար պետք է հավաքվեն լեզվի լավագույն մասնագետները:

9. Առաջնորդը պետք է կարողանա խրախուսել, պետք է ճանաչի իրական շնորհները. պետք է հանձնարարի համապատասխան աշխատանք : Գովեստի դրսևորումը արժանի կլինի երախտագիտության պարտեզին, բայց արդեն ասվել է, որ երախտագիտությունը կամուրջ է դեպի Վերին Լույս:

10. Ժամկետը և չափը որոշված են Առաջնորդի սրտում, բայց այս գիտելիքները կամայական չեն: Հաղորդակցության հաստատումը տալիս է ապագայի հետ կապվելու անխախտ գիտելիքներ : Ասված է Առաջնորդի կանխատեսման մասին, բայց որտեղի՞ց կարող է իջնել կանխատեսումը, եթե Բարձրագույն դարպասները բաց չեն: Ինչպե՞ս ստեղծել ժամկետի մասին պատկերացում, եթե Առաջնորդը չի նախատեսել հոսանքի հոսքը: Միթե՞ս կարող է մարդկային միտքը հասկանալ այն, ինչ տեսնում է Առաջնորդը: Մարդկային հպարտությունը բավարա՞ր է, որ իրեն վեր դասի ամեն ինչից: Այնպես որ, տգետները կարող են չհասկանալ, թե որտեղից են գալիս ժամկետներն ու չափերը, բայց լուսավորված Գիտակցությունը գիտի Լույսի Հիերարխիայի մասին:

11. Մոտիկության կապը, որպես ձգողության օրենք, պարզ է ինչպես հոգևորականի, այնպես էլ գիտնականի համար: Ինչպե՞ս է տեղի ունենում ընտրությունը: Ճիշտ այնպես, ինչպես ավազի հատիկներն առանձնանում են թրթռանքով: Դուք կարող եք տեսնել, թե ինչպես են նրանցից ոմանք շտապում միավորվել, բայց ռիթմի այդպիսի նկարները բնավ չեն

նշանակում տարանջատում, ընդհակառակը, դրանք միայն հաստատում են զուգակցումների պայմանավորվածությունը: «Հրե Միրտ, շտապիր տիեզերական ռիթմում և ինքդ քեզ հետ ամրացրու Գոյության գեղեցկության նկարը »:

12. Միթե՞ կարելի է բռնակալ կոչել , ընկերասիրությամբ տոգորված մեկին: Միթե՞ կարելի է այդպես անվանել համագործակցությունը խրախուսողին : Կարելի՞ է այդպես կոչել գիտելիքի ձգտողին: Կարելի՞ է այդպես անվանել ստեղծագործություն է արարում: Կարելի՞ է անվանել այդպես ինքնակատարելագործումը խորացնողին: Իհարկե, խավարի տգետները վախենում են Լույսի բոլոր հաստատումներից, բայց այս փոքրիկ եքիդնաները այրվում են Առաջնորդի սրտի Կրակի մեջ: Շատ անուններ կգրվեն թղթերի մեջ, բայց երեք հարյուր վաթսուն թերթ միայն ձեզ կհիշեցնի Գալիքի մասին: Անհրաժեշտ է սրտի հատուկ կրթություն ` Գալիքի առանձնահատկությունները ճանաչելու համար: Միայն Հիերարխիայի հետ հաղորդակցությունը կհաստատի դեպի Լույսի անսասան շարժումը: Ո՞վ ուժ կգտնի ` նայելու Լույսի շողքին, եթե նրա աչքերը չգիտեին Համբարձման սանդուղքի փայլը:

13. Հայրենիքը հաստատում է մագնիսական ձգողականություն որոշակի Հոգու կերտվածքի նկատմամբ: Կարելի է կեղծավորությամբ աղքատացնել այս հասկացությունը, բայց Բարձրագույն Հաղորդակցությունը հնարավորություն է տալիս ընդլայնված գիտակցությամբ հարստացնել երկրային Հայրենիքը: Ոչ միայն երկրային Հայրենիքն է գրավում մարդուն, այն միայն որպես ելակետ է դեպի Անսահմանություն : Կարելի՞ է ստորացնել երկրային Հայրենիքը՝ համեմատելով այն Անսահմանության հետ, ընդհակառակը, յուրաքանչյուր վերելք արժանի կլինի Առաջնորդի սրտին:

14. Օգնության ցանկությունը Առաջնորդի զարդն է: Որքան շատ հնարավորություններ են ծնվում այս վեհ ցանկությունից: Շատ ցանկություններ վերածնվում են կրքերի մեջ, բայց օգնության ցանկությունը արմատն է ինքնաբացարկման

15. Աշխատանքային ուրախության ժողովուրդներն իրավունք ունեն ղեկավարից ակնկալել աշխատանքի արդարացի գնահատում: Առաջնորդը պետք է ցույց տա աշխատանքի ` որպես հիմնարար արժեքի արժանի ընկալում: Առաջնորդը պետք է ճանաչի իրական վաստակի դրսևորումը ` ինչպես մտավոր, ստեղծագործական, այնպես էլ մկանային: Ուրախությունը պետք է լինի աշխատանքի արդյունք: Տարաբնույթ լուսավորչական շուները և հարցազրույցները կլինեն նաև հանգստացուցիչ բացահայտ ուղեցույց : Կարելի է հասկանալ, որ աշխատանքային ուրախության ժողովուրդը պաշտոնաթող աշխատողներ չի ճանաչում: Միայն հիվանդության կամ թուլության դեպքերն են հանրային բովանդակություն հաղորդում: Բայց պաշտոնաթողության մասին խոսք լինել չի կարող, երբ ուժերը չեն սպառվելմ, քանի որ աշխատանքը ուրախություն է: Անհնար է մարդկանց զրկել աշխատանքից, բայց փոխարենը, նրանց համար անհրաժեշտ է ընտրել իրենց բնույթին համապատասխան աշխատանք: Դրա համար կպահանջվի Կիրթ Գիտնականների Խորհուրդ, որոնք սնահավատությունից և նախապաշարմունքներից վեր կարող են լուսավոյալ դատել: Առաջնորդն ընտրում է այդ Խորհուրդը, և թող իր պարտականությունը լինի կանխելու խավարի տգետներին և ծառաներին: Անհնար է պատկերացնել, որ աշխատուժն ու համագործակցությունը լինեն անգրագետ ձեռքերում և անձնական շահի մեջ: Աշխատանքը գիտակցության որակի չափորոշիչ է: Աշխատանքը պետք է ուղեկցի գիտակցությանը դեպի կատարելության, այնուհետև աշխատանքը կդառնա Վերելքի դրոշը և իր հետևից կբերի ուրախություն և առողջություն: Այսպիսով, Առաջնորդը, առաջին հերթին, աշխատանքի Հովանավորն է, և նա ինքն էլ ունակ է ուրախանալ աշխատանքով:

16. Որոնեք մարդկանց, ովքեր կասեն՝ կորչեն Առաջնորդները, կորչեն ` Ուսուցիչները, կորչեն՝ Ղեկավարները: Գիտցեք, որ դրանք մակաբույծներ են, որոնք սնվում են խառնաշփոթով և քայքայմամբ: Սուտը և ոտնահարումը մակաբույծների էության մեջ են, նրանք գաղտնի հավաքում են հարստություն և դեմ չեն շքեղություն հնձելուն: Ուստի անհրաժեշտ է տարբերակել բոլոր նրանց, ովքեր իրենց բնույթով շինարար են, և ովքեր՝ Կործանող: Արդար է լինել նրանց մոտ, ովքեր գիտեն աշխատանքի բերկրանքը: Նրանք գիտեն թե Ղեկավարներին և հարգում են նաև Ուսուցչին, քանի որ նրանց էությունը ձգտում է համագործակցության:

17. Հրաշքներն ապրում են: Անշուշտ և արժե ապրել ճանաչելով հրաշքները: Շատ

պատրաստի համադրություններ փշրվում են բութ ժխտման և գիտակցության ամոթալի կուրության պատճառով:

18. Ազգերի և սեռերի հավասարությունը պետության հիմքերից մեկն է: Առաջնորդը պետք է ստանձնի ամբողջ պատասխանատվությունը այդ հիմնադրույթները պահպանելու համար: Ոչ մի մնացուկ չպետք է խոչընդոտի նրան, ինչը հաստատվում է հենց Բնության կողմից:

19. Դատավարության արագությունը բնակչությանը կտա առույգություն: Առաջնորդը պետք է ընդունի պատասխանատվություն, որպեսզի Արդարությունն իրականացվի առանց հապաղելու: Դատավորները պետք է քննությունը հանձնեն ոչ թե բանաձևերի իմացության, այլ նաև մարդու սրտի իմացության տեսանկյունից: Կարող են ներգրավվել տարբեր փորձագետներ, բայց դատավորն ինքը պետք է ունենա բավականաչափ լուսավորված գիտակցություն: Առաջնորդը պետք է ստուգի դատավորների գիտակցությունը: Արդարությունը պետության վեհության դրսևորումն է:

20. Ոչ ոք չպետք է իմանա Առաջնորդի օրվա լիարժեք բաշխումը, քանի որ բնակչությունը կարող է ամեն ժամ սպասել նրան ՝ օգնություն և քաջալերանք ստեղծելու համար: Ոչ ոք չի հրաժարվի ընդունել Առաջնորդին ո՛չ լուսադեմին, ո՛չ կեսգիշերին: Այդպես և, հենց բեռնափոխադրման միջոցներն են անսպասելիորեն ընտրվում Առաջնորդի կողմից, իսկ սպասավորներն ու հագուստը հաստատվում են Առաջնորդի կողմից:

21. Առաջնորդը հոգ է տանում ոչ միայն մարդկանց ֆիզիկական առողջության մասին, այլև պաշտպանում է հոգևոր ամրոցը: Նա հասկանում է հոգևոր համոզմունքների ազատության անհրաժեշտությունը: Նա հավաքում է Իմաստուն անհատների խորհուրդները, որպեսզի հոգևոր ազատությունը չխախտվի, քանի որ այդպիսի ազատությունը ժողովրդի թևերն են

22. Թղթադրամները մնում են երկու տեսակի: Որոշները ՝ արտասահմանյան շրջանառության համար, մյուսները՝ ներքին: Կոոպերատիվների նման ներքին նշանները կամ վկայությունները շատ նպաստավոր են ներքին արդյունաբերության զարգացման համար: Նրանք նաև օգնում են ապրանքների և արհեստների փոխանակմանը: Նման նշանների քանակը սահմանափակված չէ և կախված է երկրի արտադրությունից: Այսպիսով, Տերության յուրաքանչյուր բնակիչ կարող է ունենալ եկամտի երեք աղբյուր. Նախ ՝միջազգային արժույթի փոքր քանակություն, որը կարող է ավելացվել՝ պետության կողմից հաստատված հատուկ խնդիրների հետ կապված: Երկրորդը՝ աշխատուժի կողմից տրամադրված ներքին վկայություններից. երրորդը՝ տարբեր ապրանքների և արտադրանքների փոխանակումից:

23. Ժողովրդի կրթությունը պետք է իրականացվի երեխաների նախնական կրթությունից ՝ հնարավոր վաղ տարիքից: Որքան շուտ, այնքան լավ: Հավատացեք , ուղեղի գերբեռնվածությունը տեղի է ունենում միայն անշնորհքությունից: Յուրաքանչյուր մայր, մոտենալով երեխայի օրորոցին, կասի կրթության առաջին բանաձևը՝ դու կարող ես ամեն ինչ : Արգելքների կարիք չկա, նույնիսկ վնասակարները չպետք է արգելվեն, բայց ավելի լավ է ուշադրությունը շեղել դեպի ավելի օգտակարն ու գրավիչը: Այդ դաստիարակությունը կլինի լավագույնը, որը կարող է մեծացնել լավի գրավչությունը: Ընդ որում , կարիք չկա խեղել գեղեցիկ պատկերները՝ որակելով դրանք որպես մանկական թյուրիմացություն: Մի նվաստացրեք երեխաներին: Ամուր հիշեք, որ ճշմարիտ գիտությունը միշտ կոչված է, հակիրճ, ճշգրիտ և գեղեցիկ: Անհրաժեշտ է, որ ընտանիքները գոնե կրթության ընկալման սաղմ ունենան : Յոթ տարուց հետո շատ բան է կորսված: Սովորաբար, երեք տարեկանից հետո , մարմինը լի է ընկալումներով: Դաստիարակի ձեռքն արդեն առաջին քայլում պետք է ուշադրություն դարձնի և ցույց տա հեռավոր աշխարհները: Երիտասարդ աչքը պետք է զգա Անսահմանությունը : Հենց աչքը պետք է ընտելանա անսահմանություն ընդունելուն:

Անհրաժեշտ է նաև, որ բառը արտահայտի ճշգրիտ միտքը: Սուտը, կոպտությունն ու ծաղրը վտարվում են: Դավաճանությունը, նույնիսկ սաղմնային պայմաններում, անթույլատրելի է : Աշխատանքը «որպես մեծություն» խրախուսվում է: Միայն մինչև երեք տարեկան գիտակցությունը կարող է հեշտությամբ տեղավորել համագործակցությունը: Որքան սխալ է մտածել, որ երեխային պետք է տալ իր իրերը, քանի որ երեխան հեշտությամբ

կհասկանա, թե ինչպես իրերը կարող են լինել ընդհանուր :

«Ես կարող եմ ամեն ինչ » գիտակցումը պարծենկոտություն չի, այլ միայն ապարատի ճամաչում: Ամենաանառակն էլ կարող է գտնել լար դեպի Անսահմանություն, քանի որ յուրաքանչյուր աշխատանք, իր որակով, բացում է փականքները:

24. Տարրական և միջին կրթությունը պետք է լինի նույնը երկու սեռերի համար: Չի կարելի մասնագիտություն պարտադրել երեխային, երբ նա դեռ չի դրսևորել իր կարո-ղությունները: Բավական է ավագ դպրոցը՝ ծրագիրը ըստ կարողությունների բաժանելու համար: Այս կերպ հնարավոր է միավորել նրանց կրթությունը, ովքեր չեն կարող անմիջապես հայտնաբերել իրենց հակումները: Շատ կարևոր է, որ ծրագիրը չտարբերվի սեռերի համար: Միայն այս մեկ պայմանը կջնջի շատ վնասակար վերաբերմունքը սեռերի նկատմամբ:

25. Անհրաժեշտ է ստուգել դպրոցների ծրագրերը և ամրապնդել հուսալի գիտելիքների շարքը: Սնահավատության իդեալիզմը մարդկանց մղում է սարսափի խորշեր : Դպրոցական մտածողության այս ուղղումը պետք է անհապաղ իրականացվի, այլապես ապուշների ևս մեկ սերունդ կխայտառակի մոլորակը: Անհրաժեշտ է ամրապնդել բնագիտությունը ՝ հասկանալով այս բառի իմաստը: Մանկական ուղեղի ուշադրությունը ավելի վաղ գրավում են կենսաբանությունը, աստղաֆիզիկան, քիմիան : Մտածելու հնարավորություն տվեք երեխաներին: Նաև խորացրեք տարրական դպրոցների դասընթացները: Սա անհապաղ կիրառման համար խորհուրդ է :

26. Բոլոր հնացած առարկաները պետք է հեռացվեն: Հին լեզուները դարձնել ընտրովի: Իհարկե, ծրագիրը տատանվում է ըստ ազգաբնակչության: Փոխարենը, պետք է ներմուծվի ընդհանուր լեզվաբանության ուսումնասիրություն : Հատկապես զարգացնել դիտողական ուսուցումը, բնական գիտությունները, աշխարհագրությունը, կիրառական գիտելիքները և արհեստները: Մտցվում են հոգևոր զրույցներ տարբեր կրոնների ոգով ՝ կախված ուսանողների կազմից: Ոչնչացվում է տարբերությունը գյուղական և քաղաքային գիմնազիաների միջև: Բոլորի համար միասնական տարրական դպրոց , բոլորի համար միասնական միջնակարգ դպրոց և բոլորի համար միասնական համալսարան:

Հատուկ ուշադրություն դարձրեք տարրական դպրոցին: Տարրական դպրոցում ուսուցումը համատեղ է մինչև տասը տարեկան: Միջինը՝ 10-ից 16 տարեկան, բայց, իհարկե, կախված է ունակություններից: Միջնակարգ դպրոցը չունի միասնական ուսուցում: Քննությունները վերացվում են, բայց յուրաքանչյուր ոք տարվա ընթացքում պետք է ներկայացնի ինքնուրույն աշխատանք : Թող նույնիսկ յոթ տարեկան երեխան դրսևորի իրեն : Այդպես ավելի հեշտ է գնահատել ունակությունները: Դպրոցները պետք է լինեն ամենագեղեցիկ շենքերը:

Հոգևոր զրույցները տեղի են ունենում հատուկ սենյակում, որտեղ կախված են բոլոր կրոնների Հիմնադիրների պատկերները: Դպրոցների մասին այն պետք է ավելացնել, թող չսպանվի ոգու անհատականությունը: Իհարկե, բացառվում է ցանկացած քաղաքա-կանություն: Կարծում եմ ՝ ամառային ճամբարները շատ օգտակար են: Վերացվում են ռազմական դպրոցները, բայց դպրոցներում ներդրվում է զինվորական դասընթացներ: Նրանց համար, ովքեր ցանկանում են իրենց նվիրել ռազմական գործերին, հիմնվում է Ռազմական Ակադեմիա ՝ համալսարանին համարժեք հաստատություն: Ակադեմիա ընդուն-վողներն ազատվում են զինվորական ծառայությունից, քանի որ ընդգրկված են ծառայության: Մնացածները մեկնում են ծառայելու:

Կանանց մասնակցությունը քաղաքային տնտեսությանը:

27. Գիտակցությունը ապագային ուղորդելը ճշմարիտ դպրոցի խնդիրն է: Ոչ ոք չի ուզում հասկանալ, որ գիտակցության տեղափոխումը դեպի ապագա առաջատար մագնիսի ուսում է: Բայց հարցն այն է, որ գիտակցությունը պետք է ամբողջությամբ ուղղվի դեպի ապագա: Շատերը հավատում են, որ երբեմն կարելի է մտածել ապագայի մասին, իսկ հետո նորից լողալ անցյալում: Անհրաժեշտ է ոչ թե անհատական մտքեր նվիրել ապագային, այլ գիտակցության էությունը հարմարեցնել ապագայի բանալուն: Չի կարելի ստիպել ինքն իրեն նման վերափոխման. կարելի հասնել, միայն ապագան սիրելով: Բոլորը չէ ,որ սիրում են ապագան: Աշխատանքային ուրախության երկիրը, բարելավելով աշխատանքի որակը, կարող է բնականաբար, ներգրավվել դեպի ապագա: Առաջնորդի պարտականությունն է

ժողովրդին նպատակաուղղել դեպի ապագա.

28. Աշխարհի բնաշրջական գործընթացները պետք է շատ հրապուրիչ ներկայացվեն դպրոցներում: Հայրենիքը լիցքավորվում է համաշխարհային գործընթացներից և պետք է գրավի լիիրավ պայմանավորված տեղ և նշանակություն: Յուրաքանչյուր ոք պետք է իմանա իր Հայրենիքի իրական արժեքը, բայց այն չպետք է լինի անապատում աճող ծառ. այն ունի իր համագործակցությունը բազմաթիվ ազգերի հետ: Նմանապես, Բարձրագույն Արդարադատության հանդեպ հավատը բխելու է իրականության գիտելիքից: Թող աշխարհի գործընթացները գտնեն ողջ մեկնաբաններ: Առաջնորդն ինքը պետք է հոգ տանի, որ ժողովուրդների այս հիանալի ձևերը չխեղաթյուրվեն ՝ տգիտության անհրաժեշտության համար:

29. Յուրաքանչյուր միավորում կարող է կայանալ միայն համագործակցային հիմունքներով: Բավական է միայն թույլ տալ նվաճման ,ճնշման և նվաստացման տարր, որպեսզի վաղ թե ուշ այդ նողկալի ստվերները վերածվեն կործանարար հրեշների: Հետեւաբար, յուրաքանչյուր բռնություն չի կարող մտնել ամրոցի շենք: Կարելի է ուրախության ուժ գտնել Համագործակցության մեջ, բայց այդպիսի համագործակցությունը մտածողության արվեստ է պահանջում:

Ո՞վ է բաշխում ուժեր արտադրական աշխատանքի համար: Միայն նա, ով պատկերացնում է համագործակցության օգտակարությունը: Նա պետք է կարողանա պատկերացնել նման ընդհանուր գործը, բայց, ինչպես գիտեք, երևակայությունը պետք է կրթել: Յուրաքանչյուր դպրոցի խնդիրն է բացել հիմնավորված երևակայություն :

30. Յուրաքանչյուր գործադուլային շարժում անընդունելի է, որպես արտադրության ոչնչացում: Միայն շատ կոպիտ ձևերով պետության մեջ կարող են այդպիսի խելառու-թյուններ առաջանալ: Մարդկությունը բանականության բավարար աստիճանի վրա է գտնվում՝ հասկանալու համար վիճելի հարցերը վերացնելուը ողջամիտ խորհրդ-դացությունների միջոցով: Յուրաքանչյուր կործանարար պայման պետք է հայճեպ բացահայտվի: Թշնամության պայմաններում խոսք լինել չի կարող համագործակցության մասին: Խելամիտ ուժերը պետք է միավորվեն `աղետի վտանգից խուսափելու համար: Եթե մեխանիկական հայտնագործություններին ավելացվի հոգևոր ըմբռնումը, ապա կարելի էր հավասարակշռության հասնել:

31. Կոոպերատիվներից բացի, կան մշակութային շփման համար եղբայրություններ: Շատերը չեն հասկանա, թե որտեղ է գտնվում գործարար համագործակցության և մշակույթի եղբայրության սահմանը: Բայց յուրաքանչյուր դպրոց, յուրաքանչյուր հաստատություն կարող է միավորել մարդկանց մի շրջանակ, որն ունակ է ձգտել հոգևոր կատարելագործման: Անհրաժեշտ է ամեն կերպ խթանել միասնությունը: Ուսուցիչների բյուր կաղրեր պետք է այցելեն այդպիսի Եղբայրություններ և ուսման ուրախություն պարզևեն: Կառավարությունը խրախուսում է դաստիարակների կրթությունը: Նրանք կարող են տարբեր մասնագետներ լինել, բայց երբ գալիս է արձակուրդի ժամանակը , նրանք իրենց ժամանակի մի մասն անցկացնում են Եղբայրություններ այցելելով: Շատ կարևոր է, որ դաստիարակները տարբեր մասնագիտությունների տեր լինեն, միայն այդ դեպքում նրանք կարող են տարբեր ձևերով մեկնաբանել տարբեր գրավիչ հայտնագործությունների և ձեռքբերումների մասին:

Հատկապես անհրաժեշտ է խրախուսել երեխաներին կյանքը բարելավելու իրենց ձգտումների մեջ: Մրցանակներ կարող են տրվել երիտասարդ գյուտարարներին ՝ չսահմանափակվելով կյանքի մեխանիկական մասով: Նույն բարելավումները կարող են լինել ամենուր, նույնիսկ շատ բարձր բնագավառնեում. Այս կերպ մարդկանց միտքը կարթնանա քնից: Բայց յուրաքանչյուր բարելավում իր էությամբ դրական է: Միայն անընդմեջ, գրավիչ շարժումով կարելի է հասնել ժողովրդի ծաղկմանը:

32. Որքան տարբեր են ընթանում շինությունների պլանները: Ինչ որ ժամանակ մենք ասել ենք. «Տվեք ամեն ինչ»: Անցնենք առաջ և ասենք. «Վերցրու ամեն ինչ, բայց մի համարիր քոնը»:

Հասարակ միտքը կհասկանա, որ անհնար է իր հետ վերցնել երկրային առարկաները: Բայց դրանք ստեղծվել են ոգու մասնակցությամբ, ուստի չպետք է անտեսել դրանք: Ինչպե՞ս

կարելի է անցնել բնության ծաղիկների կողքով: Բայց աշխատանքի ստեղծագործությունները ևս մարդկության ծաղիկներ են: Եթե դրանց հոտը և գույնը անկատար են, ապա պետք է ափսոսալ:

33. Ողջամիտ է գիտակցել իրերին տիրելն ՝ առանց սեփականության զգացողության: Լավ է ունենալ առարկաներ ՝ դրանց մասին հոգ տանելու և նույնիսկ լավ աուրայով լիցքավորելու միջոցով ՝ դրանք ուրիշներին փոխանցելու մտքով: Ստեղծագործության ձեռքի դրսևորումը ապրում է տանը առանց գույքի հետ կապվածության և բարելավված՝ կթոցնի ուրախությունը առաջ: Եվ տվող ձեռքի նշանը շարունակաբար կպահպանվի. սա է իրերի արդարացումը: Այս հասկանալով կլուծվի ամենաբարդ հարցը: Ես խոսում եմ աշխարհի համար, որովհետև գոյություն չունեցող գույքին կապվելուց է հիմնականում կործանվում աշխարհը : Սա ժողովրդին բացահայտել՝ նշանակում է հանել ծերության վախը:

Առանց սեփականության զգացումի սեփականությունը ճանապարհի կբացի յուրաքանչյուրի համար ՝ առանց պայմանական ժառանգության: Ով կարող է կատարելագործել, նա էլ տերն է: Սա վերաբերում է հողերին, անտառներին և ջրերին: Մեխանիկայի բոլոր նվաճումները և տարբեր տեսակի գյուտերը ենթակա են նույնի: Հեշտ է պատկերացնել, թե ինչպես կաշխատի ժողովրդական արվեստը, հատկապես իմանալով, որ միայն ոգին է տալիս լավագույն լուծումը: Ոգու օջախին կձգվեն հարցեր. ո՞րն է լավագույնը: Եվ ոգու սրերը կխոցեն խորամանկությանը: Իսրապես, ձեռնտու է անել լավագույնը: Օրենքը պարզ է, ինչպես և ամեն ինչ ոգու մեջ:

34. Երբ ժառանգության հետ կապված դժվարություններ կառաջանան, կարելի է ասել. - կտակները չեղյալ են հայտարարվել, բայց կարելի է թողնել պետությանը, որ հայտնի իրերի օգտագործումը հանձնվի հայտնի անձնավորության՝ փորձնական երեք տարի ժամկետով: Այս կերպ ժառանգությունը կվերածվի արժանիների համագործակցության: Կարելի է հանձնարարել հատուկ ընտրյալների ՝ վերահսկելու աշխատանքի որակը: Օգտակար է խորացնել անընդհատ փորձվելու գիտակցությունը, քանի որ մարդիկ դեռ չգիտեն, թե ինչպես աշխատել փորձարկման գիտակցության հետ: Մինչդեռ աշխարհում բոլոր նյութերը փոխադարձաբար փորձարկվում են: Այսպիսով, փորձարկման մեջ պետք է հասկանալ բարելավումը:

35. Իրական համագործակցության հետամուտ լինելն է ընկած բնաշրջության հիմքում : Համագործակցային կառույցը՝ միակ փրկություն է: Ցգիտության ուղին կարելի է ոչնչացնել միայն ստեղծագործական արթնացումով: Թող դրա ձևերը լինեն նույնիսկ հրեշավոր: Թող բակերում արևի շողերից կառուցեն, բայց եռացող հոսքը կճեղքի է նյութի պատերը: Նոր բացահայտումները կսրացնեն հավաքչությունը: Բորսայական խաղի փոխարեն թող լինեն հայտնագործությունների ձգտումներ՝ կոոպերատիվների աջակցությամբ :

36. ... Մի ապրեք փողից եկամուտով: Այս շահույթն անմաքուր է: Լավագույնն է ապրանքների փոխանակմամբ՝ բարիքների տեղափոխումը , ծայրահեղ դեպքում, կարելի է թույլատրել փողի փոխանակումը ուղղակի շրջանառմամբ :

Հանցագործ սպեկուլյացիան պետք է անշեղորեն հետապնդվի , քանի որ Երկիրը հիվանդ է սպեկուլյացիայով: Յուրաքանչյուր դարաշրջան ունի իր սեփական հիվանդությունը.- այժմ Երկիրը հիվանդ է սպեկուլյացիայով: Պետք չէ մտածել, որ մարդկությունը միշտ տառապել է այս հիվանդությամբ: Բայց դա նշանակալի փոփոխության նշան է, քանի որ այն չի կարող աստիճանաբար անցնել, և վարակը ջարդելու համար անհրաժեշտ է բնաշրջության մոլուցքը:

37. Դրամական ողորմությունը պետք է ոչնչացվի: Օգնել աշխատանքով կամ իրերով: Գործազուրկ չպետք է լինի, երբ մարդիկ գնան ոգու ճանապարհով: Մեր գործն է ցույց տալ կատարելության օգուտը ոչ թե Անտեսանելի Աշխարհի, այլ հենց մեզ համար:

38. Հիմնական թյուրիմացությունը կլինի այն, որ աշխատանքը հանգիստ է: Շատ զվարճանքներ ստիպված կլինենք չեղարկել: Հիմնական բանը հասկանալն է, որ գիտության և արվեստի ստեղծագործությունները ուսում են, բայց ոչ ժամանց: Մի շարք զվարճանքներ պետք է ոչնչացվեն ՝ որպես գռեհիկության բուծում: Կրթության ճակատը պետք է մաքրի գարեջուր խմող հիմարների հասարակաց տները: Հայհոյանքի երևույթը նույնպես պետք է ավելի խիստ պատժի արժանանա: Նաև, պետք է դատապարտվի նեղ մասնագիտացման

երևույթը:

39. Ամենայն ըմբռնումով հարգենք Առաջնորդին: Դրսևորենք Առաջնորդի հաստատումն, որը մշտական վառ է պահում խարույկը՝ հաջողության և անհաջողության ժամանկ : Առաջնորդը կրում է չմարող սխրանքի բոցը: Կյանքի ուսմունքը չի ընդհատվում հոգնածությունից կամ վշտից: Առաջնորդի Սիրտը ողջ է ժողովրդի սխրանքով: Նա անվախ է և իր բառապաշարում չունի «վախենում եմ» բառը: Նա փայլող լույս է վառում իր օրինակով և ստեղծում Ազգի գիտակցությունը:

Առաջնորդի ձեռքերը երբեք չեն հանգստանում: Առաջնորդին սատարում է գործերի ծանրությունը: Առաջնորդի միտքը փնտրում է որոշումների կայունություն: Փորձի ուժը ջարդում է ուրիշի թուլությունը: Վնասի սահմանագծում նոր հնարավորություններ է լցնում : Նահանջի գծում կառուցում է ամրոցներ: Թշնամու աչքերի առջև ծածանում է դրոշը: Հյուծման օրն անվանում է հանգստի օր: Թույլ է տալիս թյուրիմացության երևույթն, որպես շեմի առք: Գաղտնիքը կարող է թաքցնել աշխատանքային հագուստի ծալքերում: Հրաշքն Առաջնորդի համար ընդամենը պայտի հետք է: Առաջնորդի համար վճռականությունը հանապազօրյա ճաշի հաց է!

40. Առաջնորդի գործողությունները հիմնվում են չորս հիմնասյուների վրա: Առաջինը Հիերարխիայի հանդեպ ակնածանքն է: Երկրորդը Միասնության գիտակցումն է: Երրորդը `Համաչափելիության գիտակցումն է: Չորրորդը «քո Աստծով» կանոնի կիրառումն է

41. Ազատության կարգապահությունն է տարբերում Առաջնորդին: Ոչ միայն ոգին, այլև արտաքին գործողությունների որակը: Առաջնորդի սովորության մեջ չի մտնում անչափ տխրելը: Առաջնորդի սովորույթին դեմ է մարդկանց անչափ լայն հաշվելը : Չափից շատ սպասելը, Առաջնորդի սովորության համաձայն չէ: Անհրաժեշտ է բարդ պլանը ավելի պարզով փոխարինելու կարողությունը , ոչ թե հակառակը: Քանզի հակառակորդները գործում են պարզից դեպի բարդը:

42. Անհրաժեշտ է ցուցաբերել ոգու կարգապահություն, առանց որի չեք կարող լինել ազատ : Ստրուկի համար այն կլինի բանտ, ազատի համար՝ ապաքինող զեղեցիկի պարտեզ :

Ոգու կարգապահության հասկացողը, կհասկանա կրակի ուղղությունը և կհասնի Համընդհանուր Բարօրության համագործակցությանը: ՈՒղու վերջը կարող է լուսավորվել Ընդհանուր Բարօրության հազարավոր լույսերով:

43. Հստակ, հակիրճ հրամանը դժվար է, բայց ավելի ուժեղ, քան կախարդական գավազանը: Հայտարարությունն ավելի հեշտ է, բայց հրամանը նման է հրաբխի բոցի անսպասելի սյունին: Անձնական պատասխանատվության կենտրոնացված զգացում կա հրամանի մեջ : ՈՒժի անսպառության ցուցումն է դրված հրամանի մեջ է: Տիեզերքի ձգտումը դրսևորվում է հրամանի մոլեգնության մեջ, իբրև ջախջախիչ ալիք : Սրբեք բարության արցունքները, մեզ անհրաժեշտ են ոգու վրդովմունքի կայծեր:

Ինչպիսի ամբարտակ են ստեղծում ափսոսանքները, բայց թևերն աճում են սրի վերջում!

44. Ի նկատի առեք, որ հրամանագրերը նախապես պատրաստվեն և այդպիսով, կարողանան ընկալվել կատարողների կողմից: Հետևաբար, առանց համագործակցության, հրամանը նման է քամու դեմ արձակված նետի: Նույնիսկ հրամանի անսպասելիությունը պետք է կանխատեսվի: Այդ դեպքում անակնկալը կվերածվի վերապրած լարվածության:

Առաջնորդը կարողանում է համագործակցություն առաջացնել ոչ միայն արարքների, այլև մտածողության մեջ: Միայն դրանից հետո աշխատակցին թույլատրվում է մեկնել հեռուներ:

Հանձնարարականի հայտնվելը պարտավորեցնում է ինքնուրույն գործել: Հոսանքը կտանի ձգտողներին:

45. Կարելի սովորել, թե ինչպես խրախուսել հոգևոր մարդկանց: Ճիշտ է, խրախուսանքի համար չէ, որ նրանք ոգու սխրանքներ են անում , բայց, այնուամենայնիվ, հոգևոր ուղղությունը պահելու համար, նրանք ևս դրա կարիքը զգում են : Յուրաքանչյուր Կառավարիչ պետք է իմանա ոչ միայն դատապարտման ուժը, այլև պետք է հասկանա խրախուսման օգտակարությունը. վերջինս ավելի դժվար է: Բայց ինչպիսի Բարօրություն է ճառագում, երբ Կառավարիչը գիտի, թե ում ինչ է պետք , որպեսզի «Լոտոսը» ծաղկի: Կարելի

է ունենալ շատ ճգնավորներ, բայց նրանց բարերար լարվածությունը էներգիայի ամենաբարձր չափը չի տա, եթե շրջապատող ուժերը թշնամաբար տրամադրվեն: Հետևաբար, սիրտը պետք է ամրապնդվի ՝ փորձելով հասկանալ ամենալավագույնը:

46. Վատն է իրական վտանգը թաքցնող Առաջնորդը: Այն հնարավոր է հաղթահարել միայն լիարժեք գիտակցումով:

Հիրավի առանց վախի և հնարավորինս միայն ես. այսպես պետք է գործի Առաջնորդը: Ճշմարիտ է անձնական պատասխանատվության երևույթը: Ոչ թե հրաշքներն ու մեջբերումները, այլ անձնական օրինակով ամրապնդված պնդումը: Նույնիսկ սխալը ավելի հեշտ է շտկել խիզախումով, քան ճկված փնթփնթոցը! Թանկաճժեք է գործողությունը, որը սարքերի և օգնականների կարիք չունի:! Արժեքավոր բանաձև հայտնաբերողը , չի կարող պատուհանից բղավել դրա մասին, քանի որ վնասը կծածկի ամենալավագույն օգուտը: Հիրավի, ինչպես փակ անոթը, ինչպես չփոցխված լեռը, ինչպես նետով լարված աղեղը՝ այսպես է կանգնած Առաջնորդը: Եվ ինչպես անոթի ըմպելիքն է բոցավառ, և ինչպես սարն է անսպառ է, և ինչպես նետն մահացու է՝ այդպես է գործում: Քանզի ո՞վ կհամարձակվի պնդել, որ դժվարությունն ամենաարագ ձեռքբերում չէ: Կաթի գետերը կթթվեն, և թթված ափերը անհարմար են նստելու համար: Այսպես, անձնական պատասխանատվության օղազրահով է Առաջնորդը շտապում :

Հաջողությունը միայն այնտեղ է, երբ ցուցաբերվում է լիակատար քաջություն: Փոքր կասկածները ստրկամիտ վախ են ծնում:

47. Բժիշկը կանխատեսում է հիվանդության ընթացքը, և դուք ձեռնարկում եք առաջարկվող միջոցները: Աստղագետը կանխատեսում է արևի խավարում, և դուք կուտակում եք անհրաժեշտ լուսավորություն: Սոցիալական հոգեբանը կանխատեսում է իրադարձությունների ընթացքը, այն ժամ դուք բղավում եք՝ Մարգարե, և սարսափով թաքնվում եք ամենազարշահոտ անկյուններում: Իհարկե, դուք դա անում եք կարծես գիտական մեթոդները պահպանելու համար, բայց ըստ էության կեղծավորությունն ու վախը ձեզ խանգարում են խորհել թե, որտեղ ավելի իրական գիտելիքներ կան. բժշկի մատչելի դատողություններում որ սողում է արտաքին շղարշներով, թե՞ հեռատես և դիպուկ սոցիալական կանխատեսողի, որի մեջ համադրվում է անփոփոխ փորձը: Հիշեք ձեր սոցիալական մարգարեներին, ովքեր գալիք դարերի համար են ուրվագծել մարդկության իրադարձությունները : Դուք նրանց միստիկ կամ մոլեռանդ չեք անվանում: Մեզ հետ միասին նրանց անվանում եք հեռատես հոգեբաններ: Այս բնորոշման վերաբերյալ մենք կհամաձայնվենք ձեզ հետ և կանգ կառնենք: Ի դեպ, հիշենք, որ դատապարտված «մարգարե» բառը նշանակում է «կանխատեսող»: Իսկական Առաջնորդը միշտ կանխատեսում է իրադարձությունների ընթացքը, ինչը նշանակում է, որ այս հասկացությունը պակաս իրական չէ, քան բժշկությունն ու աստղագիտությունը:

48. Դիտեք սեյսմիկ կորերի գուցմունքերը: Դրանք տեղակայված են ոչ հասարակածի երկայնքով և ոչ թե միջօրեականով, բայց տալիս են իրենց սեփական կորը: Երբեմն ցնցումների և տեղաշարժերի ուժեղացված ակտիվությունը համընկնում է այսպես կոչված արևային բծերի լարվածության հետ՝ ստացվում է Արեգակնային համակարգի լարվածությունը: Պետք չէ մարգարե լինել ՝ հասկանալու համար, որ այս ժամանակահատվածներում ուղեղի գործունեությունը առանձնահատուկ կընթանա:

Սոցիալական նկրտումները նույնպես ունեն իրենց տարածման կորը: Պետք է զգույշ լինել, որ իրադարձությունների այս հաջորդականությունը չընդհատվի: Տեղաշարժերի ճաքերը նույնն են ինչպես հողում, այնպես էլ ժողովուրդների ձգտումներում: Ազգային Առաջնորդը պետք է լինի բոլոր նոր հորիզոնների գագաթին: Նոր Աշխարհը պետք է ցուցաբերի լավագույն սեյսմոգրաֆի զգայունություն:

Եթե ինչ-որ մեկը բարդացնում է ժողովուրդների երթը, նա կարող է անտեղյակության ծաղկեպսակ ստանալ: Անհնար է արդարանալ օրենքների չիմացությամբ, այնպես էլ վարորդի համար պարկեշտ չէ ուղղությունից շրջվելը: Ոչ ոք չի կարող ղեկավարել անձնականը, բայց, համեմատելով ընդհանուր բարիքի արժեքները, նա կարող է ընտրել ամենաարագ ճանապարհը: Անհրաժեշտ է չթափել և ոչ մի հնարավորություն :

Թվում է, թե ասված է պարզ, ձանձրացրած ճշմարտություն, բայց, չէ որ, ոչ ոք այն չի

կիրառում, և գործողությունների ծրագիրը կազմվում է սենյակի մթության մեջ, այլ ոչ թե դետքի աշտարակում: Անհրաժեշ է դիտարկել ոչ թե այնպես, ինչպես ցանկալի է, այլ այնպես, ինչ կա իրականում :

49. Շինարարը պետք է իմանա, թե ինչպես ծանրաբեռնել տան սյուները: Ոչնչացումը, հայհոյանքը, սուտը, դավաճանությունը և բոլոր տգեղ երևույթները առաջանում են անհամեմատելիությունից:

Միթե՞ կարող է կանգուն մնալ մի շենք, որտեղ լվիճին վերագրվում է հսկայի հատկություններ: որտեղ կրակխառնիչ ավելի շատ է որոնում են Տերերը. որտեղ է մրրիկը համեմատվում մոծակի թռիչքի հետ:

Շինարարության պայմաններն են. Մտքի և արտահայտության լիարժեք համապատասխանելիությունը գեղեցկության ճշմարիտ պատվարն է: Կյանքում մարզվեք հեշտ ՝ առանց լռելու և չափազանցելու:

Առաջնորդը սերտորեն վերահսկում է աշխատակիցներին, որպեսզի նրանց արտահայտությունները համապատասխանեն իմաստին: Միայն այս ուղով կարող են տարբեր էակները համագործակցել:

Գեղեցիկ դատողությունը կլինի լավագույնը, քանի որ տգեղ է ասել. «Ես հսկային կդնեմ տուփի մեջ» կամ «արծիվը ճախրում է ինչպես հավը»:

Որքան հաճախ են լավագույն սարքերը կործանվում անհամեմատելիության պատճառով, ինչից հեշտությամբ կարելի էր խուսափել փոքր ուշադրության դեպքում:

50. Ի՞նչն է առավել տուժում: Համապատասխանելիությունը: Եթե համապատասխանությունը չի պահվում,՝ կործանվում է նաև վճռականությունը : Առաջնորդի Վճռականություն մինչև վերջին կետը: Ոչ թե վճռականության այն տեսակը, որը հարմարավետորեն ընթանում է և համապատասխանում սովորությանը: Ոչ այն վճռականության տեսակը, որը օգտակար է մարմնի համար: Առաջնորդի վճռականությունը վերջնագիծը ոգի է: Ուստի անհնար է արգելափակել Առաջնորդի ձգտումը: Շինարարներն ու հավաքողները քայլում են այս վճռականությամբ:

51. Համապատասխանելիության կոխքին պետք է հասկանալ անհրաժեշտությունը: Այսպես , վերջին քննությունը կլինի անհրաժեշտության ստուգում, այլ կերպ ասած, յուրաքանչյուր ստուգվող պետք է ասի այն, ինչը համարում է առավել անհրաժեշտ: Նրա գիտակցությունը կչափվի անհապաղ արձագանքի որակով:

Նրանք կհարցնեն. «Որտեղի՞ց սկսել յուրաքանչյուր գործողություն»:

- Ամենաանհրաժեշտից, ամեն պահ ունի իր անհրաժեշտությունը՝ գործողության արդարությունը:

Նույնիսկ, արշավող ձին, իր սմբակի ծայրով, զգում է, թե որ քարի վրա ավելի շուտ դնի ոտքը: Ահա թե ինչպես է մարդը զգում շարժունակության կարգը, համապատասխանելիությունը և անհրաժեշտությունը:

52. Օգտակարության աստիճանը կարող է փոփոխել: Չէ , որ օգտակարության աստիճանը հավասար է ծառի տերևների քանակին:

53. Անհրաժեշտ է տարբերակել կրկնվող և անկրկնելի իրերը: Կարող եք հետաձգել առօրյա իրերը, բայց ժամադրության զանգերը պետք է շտապ որսել: Կարելի է պնդել, որ տիեզերական հնարավորության պահն անփոխարինելի է: Կան սնունդներ, որոնք կարող են մարսվել միայն որոշակի կարգով: Եվ որսորդը պարապությունից չէ որսի գնում:

54. Խիզախելը մերժում չէ, բայց կա զսպվածություն և շարժում, ուստի, երբ ասում եմ «մերժեցի», պետք է հասկանալ, « պարունակող»: Անհնար է պատկերացնել մերժման էությունը, քանզի կողքին բույն է դրել արգելքը, բայց պարունակումը ցույց է տալիս գիտակցված զսպվածություն:

Երբ Առաջնորդը պարունակում է ապագան կերտելու վեհությունը, ապա ոչ ոք չի կարող կանգնեցնել ոգու աճը: Հավատարմությունը բարձր լարվածության ոգու որակ է, և զսպման դրսևորումը իրական նվաճումը դարձնում է ուրախ ընդունում: Այսպիսով, նվաճումը կարող է զարգանալ, քանի որ պայծառ ընդունելությունը իր հետ բերում է հաջորդը:

Ձգտեք դեպի ապագա շրջանցելով անցյալի մուրը:

Կարող եք. պետք չէ ոչնչացնել, այլ հավաքել լավագույն համբերությունը:

55. Կյանքի կարծրատիպերը պետք է կարողանալ շրջանցել : Լավագույն մարդիկ գերազանցել են ամպերով ծանրաբեռնված աշխարհը : Ով ցանկանում է հասնել Նոր Երկիր, ոչ միայն պետք է մի կողմ դնի բոլոր նախապաշարմունքները, այլև մտնի նոր ուղով:

Կյանքի հաստատումը պետք է հիմնված լինի տեղական պայմանների կիրառման վրա: Այնտեղ, որտեղ յուրաքանչյուր լեզու կա, պետք է հասկանալ հարյուր հոգեբանություն: Բոլորի համար մեկ արտահայտություն նման է պետության տան սյունին: Բազմազանության մեջ միասնության արդյունքն է բերք տալիս:

56. Երբեմն , անխախտելի ծրագիրը կարող է ենթարկվել դժվարությունների: Կհարցնեն. «Ինչպե՞ս գտնել լուծում առանց անչափ էներգիա ծախսելու»: Կարող է փոփոխություն լինել ծրագրի էության կամ չափի կամ տեղի հարցում:: Ծրագրի էության փոխելը հավասարազոր է դավաճանության : Պլանը չափի իջեցումը նման է կարճատեսության: Առաջնորդի որոշումը տեղը փոխելու վերավերյալ կլինի այնպես, որպեսզի նոր հիմքերն էլ ավելի խորացնեն հիմնական նշանակությունը: Կռվելու և մեռնելու հիմնական սկզբունքը չի խրախուսվում: Ավելի համարձակ կլինի ուժ չկորցնել ու հաղթել: Սակայն սա պահանջում է ձգտումի ճշմարիտ լինելու գիտակցում, լարվածության ամբողջ անսասանության ըմբռնում:

Երջանկություն կլինի , եթե գտնվի նախորդի ներուժը խորացնող մի նոր տեղ: Առաջնորդը չի սահմանափակում ծրագիրը միայն տեղադիրքի որոշմամբ՝ կարևորելով ծրագրի էությունը :

57. Պլանի անխախտության և դյուրաշարժության մասին: Այս պայմանները առավել դժվար է համատեղել, չնայած դրանց սահմանը հստակորեն նշվում է արեգակնային գիտակցության ճառագայթի ընկալմամբ: Ծրագիրը կյանքում իրականացնելու համար անհրաժեշտ է ամեն ժամ պատրաստ լինել դյուրաշարժությանը:

Թվացող փոփոխականությունը ավելին չէ, քան կյանքի թրթիռները: Դեպի անխախտության նշաձողեր տանող արահետները ալիքների պես շնչում և ալեկոծվում են:

Հաստատելով ծրագիրը, Առաջնորդի էությունն արդեն պատրաստ է ամենակարճ ճանապարհին: Դյուրաշարժությունը կարող է ծնվել միայն ծրագրի անխախտության գիտակցումից:

58. Ժամկետների անհամեմատելիության մասին: Օվկիանոսի ալիքի կողքին կան իրադարձությունների փոքր առուներ : Միթե՞ կարելի է խառնել առուն օվկիանոսի հետ: Բայց Երկրի վրա միշտ շտապում են անձնականը խառնել համաշխարհայինի հետ : Ինչպես ձեռքը զգում է գործվածքի հաստությունը, այնպես էլ ոգին պետք է տարբերակի իրադարձությունների խորությունը:

Առաջնորդը չպետք է տարվի իրադարձության թվացյալ մեծությամբ, քանզի հիմնական հանգույցների միջև կարող են լինել բազմագույն ուրվականներ, և առուները կարող են ժամանակավորապես փոխել իրենց հունը: Հանգուցային ալիքի երևույթը բարձրացնում է ակնթարթորեն, յուրաքանչյուր ալիքից առաջ նավը նվաղում է: Ամենազգայուն նավը ավելի ուշեղ կսարսռա, քանի որ պայթյունի փոշին լցնում է մթնոլորտը: Ուստի ժամանակի և իրադարձությունների համապատասխանությունը չպետք է մոռացվի:

Հաջողության արագացումն, ինչպես դանդաղեցումը , գալիս է ալիքաձև: Տեսնելով արագացման ալիքը ՝ պետք է հնարավորինս շատ հատիկներ նետել դրա մեջ:

59. Շինարարության ընթացքում Առաջնորդը դիտում է, որ ՌԻխտերի անձնական կատարման քողի տակ չթաքցվի սեփական շահը : Ստեղծագործական նվաճումների ոչնչացմանը հետևում է մութ անձնական շահը: Ասեմ, որ այս որդը չափազանց բնորոշ է մարդկության տգիտությանը: Առավել ևս պետք է իմանալ դրա ծագման պատճառը: Ամենաէական պատճառը կլինի առավելությունը:

Մենք պետք է ամբողջ ուժով ոչնչացնենք այդ վնասակար ուրվականը: Համագործակցությունը նախ և առաջ նախատեսում է հավասարություն: Սխալ գործելով հավասարության դեմ ՝ անմիջապես հայտնվում եք աղետալի առավելության առջև: Անհավասարության երևույթը ճռճանակ է ստեղծում: Մեկի մեծ վերելքը ստեղծում է միայն մյուսի ավելի մեծ վերելքը : Սյուների թուլացումից ազատվելու միակ միջոցը

հավասարությունն է: Կան ցինիկներ, ովքեր ասում են, - թող ճռճվեն, հատկապես էներգիան կշատան տարածության մեջ: Դիտողությունը, որը զուրկ չէ իմաստից, բայց հենց շինարարկան գործն է, որ այնքան խնամքի կարիք ունի, որ ուժի իրական տնտեսման երևույթը պետք է ընդունվի: Առավել տնտեսման սկզբունքը հավասարությունն է, այն ոչնչացնում է առավելությունն ու շահը:

60. Ճշմարիտ հրեղեն-գույնը, իրական անշահախնդրություն է, բայց այն պետք է արտահայտվի ոչ միայն գործողություններով, այլ հենց գիտակցությամբ: Գործողությունները, թափառող ստվերների նման, արտացոլումներ են, և դողացող պայմանականությունների հողմը մթագնում է գործողությունների իմաստը: Արդյո՞ք արարքը կարելի է դատել առանց պատճառի և հետևանքի: Այդ ժամանակ փրկիչը կլինի վիրավորող, իսկ տվողը կթվա ժլատ: Բայց անշահախնդրության գիտակցություն հաստատելը հեշտ չէ, անհատականությունն անխուսափելի է: Եվ անշահախնդրություն համադրությունը կարող է տեղի ունենալ միայն ապագայի հստակ գիտակցմամբ: Անշահախնդրությունը հիմնված չէ անցյալի փորձի վրա: Միայն ապագայի իրական զգացողությունը կարող է ստեղծել ներքին դատողություն հնարավորի սահմանի վերաբերյալ:

61. Գործողության որակները: Եթե գործողությունը փոքր է, ապա դրա կարիքը ունի տարբեր ձեռագործ իրեր: Երբ գործողությունը դառնում է մեծ, այն երկրային առարկաների կարիք չունի: Սա գործողության առաջին փորձաքարն է:

Գործողության երկրորդ որակը նրա շարժունակությունն է: Նախանյութի հորձանուտի նման, իսկական գործողությունը պետք է բաբախի հնարավորությունների հետ: Միայն թռիչքը կարող է ավարտին հասցնել լուսավոր արտահայտված միտքը:

Գործողության երրորդ որակը դրա անսպասելիությունն է: Մտքերն ապշեցրած յուրաքանչյուր գործողություն անսպասելի մտածելակերպի արդյունք էր:

Գործողության չորրորդ որակը դրա անորսալիությունն է: Միայն այս որակն է պաշտպանում գործողությունը վնասակար հարձակումներից:

Գործողության հինգերորդ որակը նրա համոզչությունն է: Քանի որ յուրաքանչյուր կայծակ մեր գիտակցությունը կապում է Տիեզերքի հետ, այնպես էլ յուրաքանչյուր գործողություն պետք է ապշեցնի թրի շողշողում:

Գործողության վեցերորդ որակը դրա օրինականությունն է: Միայն աշխարհի էվոլյուցիայի հիմքերի գիտակցումը կմղի գործողությունը դեպի անխախտություն:

Գործողության յոթերորդ որակը դրա մաքուր ուղարկումն է: Դրա միջոցով կարող եք ծանրությունները տեղափոխել առանց հոգնածության: Անհրաժեշտ է հավասարապես հասկանալ մարմնի և ոգու գործողությունները, քանի որ բոլոր ասվածից հետո մտքի գործողությունը դեռ չի գնահատվում:

62. Սպասելու որակները: Բարձրագույն սպասումը Աշխարհի էվոլյուցիայի սպասումն է: Նորմալ սպասումները բաժանվում են մութի, քնկոտի և զգոնի: Մութերի քաոսը միայն վնաս է հասցնում տարածությանը: Քնկոտ սպասումները նման են ծխացող ածխի: Զգոն սպասումները ամեն ժամ նորը ընդունելու պատրաստակամություն են:

Սպասման ներքին որակը նրա աճելու հատկությունն է: Ինչի՞ հետ կարելի է այս հատկությունն ավելի լավ համատեղել, քան աշխարհների էվոլյուցիայի հետ: Այս սպասումը պետք է ներթափանցի մեր ամբողջ կյանքը: Մեր աշխատանքը պետք է լցված լինի գործողությունների բաբախմամբ, քանի որ սա լավագույն և ամենագեղեցիկ համադրությունն է:

Մտնելով անհանգիստների տուն `ասեք` սպասեք աշխարհի էվոլյուցիային:

63. Գնահատելի է որոշում առաջացրած միտքը: Լուծումը գնահատվում է դրա կիրառելիության որակով: Կիրառելիությունը գնահատվում է ոգու իմացությամբ, այնժամ ստացվում է գործողություն, որի կարելի է ուրախանալ: Ուէրախացողը հավատում է: Անգամ հավատը պետք է հիմնավորված լինի:

Առաջնորդը լավ է հաշվում ու ամուր է շարում: Եթե մեղադրեն խոհեմության մեջ, և դա չի շեղում, քանզի խոհեմությունը հակառակ է խելառությանը, իսկ խելառությունը հակառակ է ոգու իմացությանը: Եվ ինչ շրջապատի էլ մեզ նշանակենք , այնուամենայնիվ, մենք կվերադառնանք ոգու մեծ գիտելիքին:

64. Ոչ թե բառերը, այլ տարածությունը լցնելու անխախտ հրամանն է դրդում Առաջնորդին : Վախի ոչնչացումը կօգնի դժվար ժամանակներում: Հատկապես դժվար է հաղթահարել միայնության գիտակցումը: Իմաստուն առասպելներում հաճախ նշվում է անհատական ճակատամարտը: Մարտիկ՝ նա է հետախույզը, նա է խորհրդականը, նա է որոշողը, նա է հերոսը: Նկատեք, որ այս բառը գրեթե վտարված էր հին աշխարհի բառապաշարից: Հերոսը անընդունելի է դառնում փոքրիկ սրտերի կյանքում: Ինչպես անծանոթ նա կարող էր ամաչել բարիք արարելու մտահղացումից: Կարողացեք լինել այնտեղ, որտեղ հերոսներն են: Աշխարհը ցնցվելու է հերոսության իրականությունից:

Թող երեխաներն իրենց հերոս անվանեն և հիանալի մարդկանց որակը կիրառեն իրենց վրա: Թող նրանց հստակ շարադրված գրքեր տան, որտեղ առանց հաշտարար աղավաղման ուրվագծվի աշխատանքի և կամքի պատկերը: Նույնիսկ բժշկական նպատակներով կյանքի այս արթուն կոչը անփոխարինելի է: Նման նյութը պետք է տրվի առանց հապաղելու: Դա անելու համար պահպանեք այն քչերին մասին, որոնք կարող են տալ:

65. Պետք է զգուշանալ ժամանակ չունեցողներից: Կեղծ զբաղվածությունը, առաջին հերթին, ցույց է տալիս ժամանակի և տարածության զանձն օգտագործելու անկարողությունը: Նման մարդիկ կարող են կատարել միայն աշխատանքի նախնական ձևերը: Անհնար է նրանց ներգրավել ստեղծագործության մեջ: Մենք արդեն խոսեցինք ժամկետների ստախոսների՝ ուրիշների ժամանակը գողացողների մասին,հիմա եկեք խոսենք մանրխնդիր ծույլերի ու սահմանափակ ուղեղներ՝ կյանքի ուղին փակողների մասին: Նրանք զբաղված են, ինչպես պղպեղով լի անոթ, նրանց մոտ մշտական են աշխատանքից դառնությունը: Նրանք կարևոր են հնդկահավերի նման, քանի որ ծխելու զարշահոտությունը հաշվելիս նրանք ներկայացնում են թմրեցման աշխատանքի վայրը: Հարյուրավոր պատրվակներ են հորինվել փտած աշխատանքի ճաքերը լրացնելու համար: Նրանք ամենաhրատապի համար մեկ ժամ չեն գտնի: Իրենց հիմարության մեջ նրանք պատրաստ են լկտիանալու և ուրանալու դրանց համար ամենա կենսականը : Նրանք անպտուղ են, որքան և ուրիշի ժամանակի գողերը:

Մենք գիտենք շատ աշխատողների, ովքեր ժամ կգտնեն ամենակարևորի համար. նրանց չի թվում, որ իրենք զբաղված են: Եռանդով աշխատողը , առատաձեռնորեն կտանա: Աշխատանքի պարունակման այս որակը անհրաժեշտ է գիտակցության ընդլայնման համար: Կարելի՞ է ինչ-որ բանով փոխարինել գիտակցության աճի ուրախությանը:

66. Զիմադրելը նման է երկար բաց մնացած խնկի շշի , բայց ստեղծագործական համբերությունը նման է փակված հին գինու:

Առաջնորդը վերահսկում է ստեղծագործականության լարվածությունը. յուրաքանչյուր սոցիալական կառույցում այն կառույցն է ճիշտ , որտեղ ոգևորվում է տարաբնույթ ստեղծագործումը: Եթե ստեղծագործումը բեռ է, դա շինարարության մեջ սխալի հաստատ նախանշան է: Պետք չէ թույլ տալ, որ այս սխալները բնաորվեն: Կանչեք որմնադիրներին, վերաշարեք պատերը, մինչև ազատ չինչի երգը:

Ազատ մտերմանալու, ծառայելու և աշխատելու սկզբունքը պետք է պաշտպանված լինի: Բեռի երևույթի դրսևորումը միայն անկատարության նշան է: Իմաստության դրսևորման հաստատումը կլինի ամուր նշաձողերով շրջապատված գիտելիքի նախատեսված կերպարը :

Ճշգրիտ դուռը բացելով, կտանք ճիշտ ուղղություն :

67. Յուրաքանչյուր համագործակցության կյանքում կա իրավիճակ, երբ զարգացումը մեկ ուղղությամբ կարող է վնասել հետևանքին: Այդ դեպքում Առաջնորդը պետք է գտնի նոր առաջադրանքների ուղի, որը բավական լայն է ՝ շփումը կլանելու համար: Մրցակցություն չենք անվանի շփում կամ վատթար անուններով: Վտանգավոր նեղուցներում նավերը գնում են մեկ մեկ, և համագործակցության զարգացման մեջ գուցե անհրաժեշտ լինի մասնատել մասնակիցների տեղաշարժը: Հնարավոր վնասի փոխարեն դուք կստացվի նոր ոլորտների տիրապետում: Երբ մկաններն ուռչում են, իմացեք, իմացեք էներգիան հանելու հնարքը : Եթե չկանխվի շարժման նեղվածքը, ապա տարաձայնությունն ապահովված է:

Առաջադրանքների բազմազանության դրսևորումն անհրաժեշտ է, հակառակ դեպքում կքախվեն գիտակցության աճող ուժերը: Առաջնորդից է կախված օգտակար ուժերը

կարիճի պուլիկ չդարձնելը: Բարեբախտաբար, անհապաղ առաջադրանքներն այնքան շատ են, որ դժվար չէ ուղղորդել ուժերը դեպի հրատապ նվաճում: Ուժերի աճելը հաճախ շփոթում են առճակատման հետ: Հաճախ առիթը լուռ օգտագործելու փոխարեն բորբոքում են ատելության ածուխը: Առաջնորդը չպետք է բաց թողնի այս հոգեբանական պահը և ժամանակին նոր առաջադրանք տա: Բարդություններից կարելի է խուսափել հաղթանակի գրավականով՝ առավել գործնական մեթոդներով : Իրականության ուսուցումը պետք է համապատասխանի բնաշրջության ընթացքի բարդության ծավալին: Նոր աշխարհաշինության դրսևորումը պետք է ամուր պաշտպանված լինի:

68. Կարեի է միտքը սովորեցնել շրջապատող իրերի սեփականության ճիշտ ընկալմանը: Օրհնություն է գիտակցելը . Ոչինչ չի պատկանում ինձ, այլ մեզ, և մենք ցրված ենք ամբողջ մոլորակով: Հնարավո՞ր է բավարարվել անձնական հարստացման կյանքով: Հնարավո՞ր է յուրացնել ազար առաջնային նյութը, որը հագեցնում է յուրաքանչյուր առարկա: Իմացեք զգալ յուրաքանչյուր առարկայի մեջ նյութի առկայության անհրաժեշտությունը: Հաճախ համաձայնվում են ընդունել նյութը հեռավոր եթերում, բայց անհեթեթ են համարում վերամշակված և առօրյա առարկաների մեջ նյութի առկայությունը: Մինչդեռ բարձր նյութի ընդունումը յուրաքանչյուր առարկայի մեջ առաջ է բերում պատկերացում կյանքի բոլոր մանրամասների մասին:

69. Ժամանակակից արդյունաբերությունն ու բոլոր շոշափելի արտադրանքները քանակապես և որակապես այնքան անհավասարակշիռ են, որ դեռևս բացառում են իրերի ճիշտ բաշխման հնարավորությունը: Հարկադիր և անգիտակից բաշխումը ծնում են խաբեություն և սուտ : Նոր հնարավորու-թյուններ սպասել անգործության մեջ , թե՞ խորացնել գիտակցությունն ըստ էության : Կարիք չկա բռնի կերպով փորձել խլել իրերը և այդպիսով կրքոտություն ստեղծել աղբի համար: Հիմնական բանը հողերի տիրապետման ու ժառանգության վերացնելն է և խելացիորեն իրականացնել կրթական խնդիր սեփականության նվաստացուցիչ, եսասիրական արժեքի մասին: Անհրաժեշտ է, որ այդ գիտակցությունը ոչ թե մերժում լինի, այլ ազատ նվաճում: Երբ առանց խորամանկության մարդիկ իմանան սեփականության ոչ գործնականության մասին, այդ ժամանակ համագործակցության թիմ կաճի:

70. Սեփականության ընկալման թունոտ շունչը հնարավոր է ոչնչացնել միայն լավ մտածված դպրոցական ծրագրով: Այդպես և, կրոնը հաստատվում է ոչ թե արգելքով, այլ Կյանքի ՈՒսումունքի առաջարկով: Սեփականություն հասկացության դեմ գրականություն չկա: Կուսակցական ծրագրի կետը համոզիչ չէ: Շատ քչերն են հաղթել անպիտան վիշապին: Բայց շատերը երազում են սեփական ձեռքբերումների մասին: Որքան արդար պետք է լինեն պատմական համեմատությունները: Որքան խիստ պետք է ընտրվեն կենսաբանական մանրամասները՝ սեփականության անօրինականությունն ու ունայնությունը ցույց տալու համար: Նյութի հատկությունների օրենքները վկայում են այն մասին, թե ինչպես եսահոգ սեփականությունը չի համապատասխանում մարդու բնությանը:

71. Դավանանքները և օրենքներն դեմ են գողությանը: Գողությունը վնասակար է որպես հասկացություն, որն ուժեղացնում է սեփականության զգացումը: Գողությունը վնասում է աշխարհի էվոլյուցիային, բայց համաշխարհային էվոլյուցիային վնաս հասցնողների մասնաբաժինը նախանձելի չէ: Նրանք իրենց շատ աքսորում են հետ:

Կարևոր չէ, որ որևէ իր կանցնի այլ ձեռքեր, այլ կարևոր է, որ երկու մարդ կճաշակեն սեփականության բռնկման զգացումը:

Գողության մասին օրենքն անկատար է, զի հիմնական գողությունները ՝ գիտելիքները, գաղափարները, ստեղծագործությունները , չեն կարող կանխատեսվել: Ժամանակի գանձը կարելի է գնահատել միայն Ընդհանուր Բարիքի համար աշխատելիս: Առավել քիչ կարելի է գողանալ քո եղբոր ժամանակը: Անիմաստ ժամանակ գողանալը նույնն է, ինչ գաղափարներ գողանալը:

72. Արգելքը պետք է ժխտվի՝ դա ձգտելու օրենքն է: Բայց անփոխարինելի արժեքը կպաշտպանվի. սա է ձգտելու օրենքը:

Ճշմարտացի նայենք իրերին. անփոխարինելի ամեն ինչ կլինի պահպանման առաջին տեղերում:

73. Առաջնորդը վերահսկում է դպրոցներում դասավանդման նպատակահարմարությունը: Անհրաժեշտ է ստեղծել հաջող առաջխաղացման հնարավորություն: Եթե արագընթաց նավը պետք է իջեցնի առագաստները ՝ շարքը հավասարեցնելու համար, արդյո՞ք դա չի լինի հնարավորությունների սպանություն: Գիտե՞ք, թե ինչպես է ստեղծվե սլացիք ձգված նավը: Եվ արդյո՞ք այն կառուցված չէ ամենամեծ վտանգն ընդունելու համար: Ինչպե՞ս օգտագործել այն սառեցված բանջարեղեն տեղափոխելու համար: Միշտ պատասխանատվությամբ պահեք առաջընթացի հնարավորությունը : Թող դպրոցի առաջին օրվանից դանդաղ քայլը կապանք չլինի արագ քայլողի համար: Թող ուսուցիչը զգոն ճանաչի արագ քայլելու ունակներին: Պետք չէ զովաբանել նրանց, այլ պետք է ճանապարհին ազատել նրանց համար: Պետք է ստեղծվեն միջանկյալ դասընթացներ. այդ աստիճաններով կարող են արագընթաց վազել: Մի թաքցրեք դժվարությունները նրանցից: Գիտակցության որոշակի տիպի համար յուրաքանչյուր սխրանքի նման շարժում արդեն լույս է և ուրախություն: Լավ ուսուցչիը կարող է արագ որոշել աշակերտի մտածողության ուղղությունը, քանի որ սխալ խրատելը լուրջ հանցագործություն է. դրանով կարել է կորցնել լավագույն աշխատողներին: Յուրաքանչյուր անշարժ ծրագիր անտանելի դիակ է գիտելիքի արևի տակ : Դպրոցը պետք է հնարավորինս արագ ամրապնդվի ՝ փորձարկելով ուսուցչի գիտակցությունը: Ստեղծեք նրա համար լավագույն դիրք, որպեսզի նրա վրա դրվի պատասխանատվությունը երիտասարդ աշխատողների գիտակցության համար: Անհնար է, որ ապագայի դպրոցները նմանվեն անասունների գոմ,ի , որտեղ վերջին սերունդներն են հաշմվել: Դաժանություններն ու արգելքները փոխարինվում են հնարավորություններով:

Տվեք արհեստների ուսում, տվեք ընտրության ազատություն և պահանջեք աշխատանքի որակը: Դրա համար յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հասկանա որակի իմաստը:

74. Առաջնորդը դեմ է նախապաշարմունքներին և մնացուկներին: Այս գիտակցության մեջ է նա ասում.- Զգույշ վերաբերվեք այլոց սովորույթներին : Հաճախ հիմքում ընկած է գիտելիքների զարգացումը , ուստի բոլոր նստվածքները պետք է լվանալ, բայց ողջամիտ հիմքի իմաստը կոտրելն անհիմն կլիներ: Եթե ճարտարապետը տեսնում է հիմքի ուժը, ապա այն օգտագործում է նոր շենքի համար: Անհրաժեշտ է միջոցների համաշխարհային տնտեսում: Ոչնչացման շքեղությունը անցել է պատմության գիրկը: Աշխարհին պետք են ոչ թե նոր տարրեր, այլ նոր համադրություններ: Եվ նոր նվաճողի ճանապարհը լուսավորվում է ոչ թե կրակների փայլով, այլ նոր ներգրավված էներգիայի կայծերով:

75. Դպրոցներում պետք է զարգացնել մտածողության արվեստը: Յուրաքանչյուր արվեստ կարիք ունի վարժությունների: Մտածողությունը նույնպես պետք է ամրապնդվի վարժություններով, սակայն նման խորացումը չպետք է լինի ցավոտ և ձանձրալի, քանի որ նման առարկայի ղեկավարը պետք է իսկապես լուսավորյալ: Կարելի է տեսնել, որ մարդկության պատմության ամենավատ արհավիրքները առաջացել են մտածելու անկարողությունից: Կարել է գտնել բազմաթիվ օրինակներ, երբ կցկտուր մտածողությունն ու անսանձ զգացմունքներն ամբողջ ժողովուրդների տարել են դեպի անդունդ: Մյուս կողմից, մտածողության ծուլությունն ու թանձրամտությունը քայքայել են արդեն կառուցված հնարավորությունները:

Առաջնորդն ինքը պետք է օրինակ ծառայի մտածողության անընդհատ ընդլայնման համար, որպեսզի մոտենա հեռատեսությանը: Իհարկե, հեռատեսությունը գալիս է Հիերարխիայի հետ շփումից: Բայց հաղորդակցությունն ինքնին պահանջում է մտածողության շարժունակություն և հստակ ձգտումներ: Մտածողության արվեստը չպետք է ընկալել որպես թաքնագիտական կենտրոնացում: Մտածողության արվեստի և գիտակցության նրբացման մեջ նման բան չկա: Միայն բարեխղճության բարձր որակը կհաստատի մտածողի ուղին: Ընդ որում ոչ ոք չի ասի, որ մտածողը հատուկ ցեղատեսակ է: Յուրաքանչյուր երեխա կարող է ուղղվել մտածողության: Այսպես պետք է մտածողության արվեստը դիտել որպես ժողովրդի առողջություն:

Զանգվածների առաջնորդումը պարտավորեցնում է ընդլայնել գիտակցությունը:

76. Անհրաժեշտ է նշել պահանջվող գիտելիքների որակը: Գիտելիքը պետք է լինի անվերապահ: Յուրաքանչյուր պայմանական, կապկպված գիտություն անդառնալի վնաս է

պատճառում: Տարրերի ազատ համադրությունը տալիս է յուրահատուկ, նոր ձեռքբերումներ: Ո՞վ կարող է քիմիկոսին ասել, որ օգտագործի տարրերի միայն մեկ խումբ: Ո՞վ կարող է ստիպել պատմաբանին ու փիլիսոփային չանդրադառնալ պատմական փաստերին: Ո՞վ կարող է պատվիրել նկարչին օգտագործել միայն մեկ ներկ: Ամեն ինչ բաց է գիտելիքի համար: Գիտության ոլորտներում միակ առավելությունը կլինի ավելի մեծ համոզչությունն ու գրավչությունը: Եթե ցանկանում եք հրապուրել ձեր գիտելիքներով, դարձրեք դրանք գրավիչ: Այնքան գրավիչ, որ երեկվա գրքերը երևան որպես չոր տերևներ: Հաղթանակի համոզչությունը կփրկի ձեզ չքանդվող արգելքներից: Ամենակարևորը՝ հոգալ սովորողների կյանքից արգելքները դուրս մղելու մասին: Սա հատկապես հեշտ է նոր կյանքի կառուցողների համար, քանի որ նրանց գիրքը կարող է լինել հատկապես ոգեշնչող և հուզիչ: Իհարկե գրագրային շարադրանքը անտանելի է: Թշվառ դեղագործը հետ կմղի յուրաքանչյուրին, ով չի դիմանում գեղեցկության նկատմամբ անտաղանդ վերաբերմունքին: Շինարարության շուրջը պետք է լինի ոգեշնչանք:

Բույսերը ձգվում են դեպի Լույս. Առաջնային գիտակցության այս նշանն անդառնալի է: Քայլեք անդառնալիության ճանապարհով և կառուցեք կյանք: Ոչինչ շեղված չէ, և կյանքը կլանում է յուրաքանչյուր միտք: Հետևաբար, լինենք ճշմարիտ իրատեսներ :

77. Դպրոցներում պետք է սովորեցնել հարգանք արտաբերած հասկացության նկատմամբ : Ի վերջո, թութակները կարող են անիմաստ կերպով հաճախ մեծ նշանակություն ունեցող հասկացություններ ուղղել տարածություն: Բայց մարդիկ պետք է հասկանան, որ յուրաքանչյուր բառ նման է որոտբեր սլաքի, իսկ խոսքը ՝ մտքի ոտնակի: Հայեցակարգերի իրական իմաստների կորուստը մեծապես նպաստել է ժամանակակից վայրենացմանը: Մարդիկ ավազի պես մարգարիտ են թափում: Իրոք, ժամանակն է փոխարինել բազմաթիվ սահմանումներ:

Դպրոցներում սահմանվում են հատուկ դասընթացներ. փիզիոլոգիայի կողքին պետք է տրվի ոգու հասկացությունը: Գիտելիքը, ի վերջո, պետք է գիտականորեն կառուցի ձգտման կամուրջ դեպի ոգին: Նոր Աշխարհը կբացահայտի համարձակ ճանաչողության հաստատում: Այնտեղ Ուսուցիչների Պատկերները կյանք կմտնեն որպես Ընկերներ: ՈՒսուցչի հրամանագիրը կլինի ձեր նախընտրած գրքերի դարակում:

78. Դուք հաճախ խոսում եք գոյություն ունեցող գրքերի անկատարության մասին: Կասեմ ավելին . գրքերում սխալները հավասար են ծանր հանցագործության: Գրքերում ստելը պետք է հետապնդվի որպես կոպիտ զրպարտության ձև: Ճառողի ստերը հետապնդվում են ըստ լսողների թվի: Գրողների ստերը՝ ըստ գրքի տպագրության քանակի: Գգրքի հանրաճանաչ գրապահոցների փոխարեն կեղծիքով զբաղվելը՝ ծանր հանցագործություն է : Անհրաժեշտ է զգալ գրողի իրական մտադրությունը, որպեսզի գնահատվի նրա սխալների որակը: Տգիտությունը կլինի ամենավատ պատճառը: Վախն ու ստորությունը կզբաղեցնեն հաջորդ տեղը: Այս բոլոր հատկանիշներն անթույլատրելի են: Նրանց վերացումը պետք է իրականացվի նոր շինարարության մեջ: Արգելիչ միջոցառումներն, ինչպես միշտ, անպատշաճ են: Բայց բացահայտ սխալը պետք է հեռացվի գրքից: Գրքի հետ կանչելու ու վերատպվելու անհրաժեշտությունը ուշքի կբերի գրողին: Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ապացուցելու սխալը: Իհարկե, նոր տեսակետներին և կառույցներին չի կարելի խոչընդոտել, բայց սխալ տվյալները չպետք է մոլորեցնեն, հետևաբար գիտելիքների պաշտպանությունը ընկնում է բոլոր անդամների վրա: Գրքերը պետք է ստուգվեն մեկ տարուց ոչ ուշ, հակառակ դեպքում զոհերի թիվը մեծ կլինի: Հատկապես անհրաժեշտ է հոգ տանել արժանապատվությունը ցնցված գրքի մասին : Գրապահեստարանների դարակներում ստի ահագին թարախակույտեր կան: Անթույլատրելի կլինի պահել այդ մակաբույծներին: Կարելի է ասել ՝ քնեք վատ մահճակալի վրա, բայց անհնար է առաջարկել ըթներցելու ստահոգ գիրք լ:

Ինչու՞ օջախի լավագույն անկյունը վերածել խաբեբա ծաղրածուի: Իրոք գրքերն են կեղտոտում երեխաների գիտակցությունը: Գրքի հիմնախնդիրը պետք է ընգծել:

79. Մարդկային փոխհարաբերությունների օրենքները չեն կարող հաստատվել ակնհայտության տարրերի բաշխման տրամաբանությամբ: Ինչպե՞ս, առանց շրջակա բոլոր գործընթացների ուսումնասիրության, կարող են մասնատել մտածող ապարատի

հանգույցները: Ինչ -որ տեղ վարդագույն ճառագայթներ բռնկվեցին, և մի ամբողջ ժողովրդի պատրաստ ապստամբությունը մարեց: Ինչ -որ տեղ օվկիանոսային հոսանքները փոխվել են, և տեղի է ունեցել համաշխարհային առևտրի փոփոխություն: Սրանք կոպիտ, ակնհայտ օրինակներ են: Բայց որքան նուրբ պատճառներ և հետևանքներ են հագեցնում տարածությունը և ակոսում մարդկության շերտերը!

Մարդկանց ճակատագիրը որոշող, մտիր լաբորատորիա և բարձրացիր աստղադիտարան և միանգամից չես գտնի սոցիալական խնդիրների հետ նմանություն , հետաքրքրասեր միտքը կընկալի իրականության ապարատի բարդությունը: Նա կընկալի մարդկության էվոլյուցիայի ճակատագրի անբաժանելիությունը տիեզերական գործընթացներից: Հետևաբար, ճշմարիտ գիտելիքն առանց նախապաշարմունքների ապագայի հաստատ ուղեցույց կլինի: Ով կկտրի մարդկային հասարակության գիտությունը համաշխարհային գործընթացներից, նա կկտրի իր ոտքերը և կդատապարտի իրեն հաշմանդամի գոյության:

80. Քիչ փորձեր են արվել մեխանիկան կապելու հոգեբանության հետ: Առաջնորդը գիտի, թե ինչպես է հոգու նկատմամբ գիտական վերաբերմունքը հեշտացնում ամբողջ գոյությունը, և հրատապ ուշադրություն կդարձնի հոգևոր ապարատի հնարավորություններին: Հոգոմեխանիկան կդառնա հոգեկան էներգիայի կիրառման ճիշտ սահմանումը: Կարելի է նկատել ֆաբրիկային աշխատանքի հետ կապված հետաքրքիր փորձառություններ: Յուրաքանչյուր փորձված աշխատող գիտի, որ մեքենաները հանգիստ են պահանջում : Դժվար է ավելի սերտորեն սահմանել այս երևույթը, բայց այն շատ ծանոթ է նույնիսկ նրանց, ովքեր գաղափար չունեն հոգեմեխանիկայի մասին : Մենք փորձեր ենք արել մանածագործական ֆաբրիկաներում, որտեղ կան հարյուրավոր հաստոցներ և մինչև հարյուր բավականին փորձառու աշխատողներ: Հաստոցները թույլտվություն են խնդրել չթույլատրված համամասնությունից դուրս, անկախ ջուլհակի փորձից: Ջուլհակներին հոգեբանական թեստի ենթարկելով ՝ կարելի էր հստակ տեսնել, որ հոգեկան էներգիա ունեցող ձեռքերում հաստոցները ավելի քիչ հանգստի կարիք ունեին, կարծես կենդանի հոսանք էր հաղորդվել հաստոցին և երկարացրել դրա կենսունակությունը: Աշխատողի և մեքենայի միջև այս աշխույժ համակարգումը պետք է կիրառվի աշխատանքային համայնքներում: Հնարավոր է հասնել այս շահավետ պայմանին հոգեմեխանիկայի ուսումնասիրության ժամանակ: Պետական խնդիր է կյանքի կոչել ամենաարդյունավետ պայմանները՝ միջոցներ ձեռնարկելով և ուղղորդելով գիտնականներին՝ կոլեկտիվի կյանքը դյուրին դարձնելու համար:

81. Մերժե՞լ, թե՞ բազմապատկել: Իհարկե, լիարժեք է և ուրախալի է բազմապատկելը, բայց ընդհանուր բարիքի համար: Բայց ամենափոքր ակնարկն աղանդավորության մասին և երեսպաշտության սահմանափակումը հակասում է արևային էվոլյուցիային: Խիստ ուրախությունը խուսափում է խավարից: Արգելքների և սահմանափակումների խլուրդները երբեք արև չեն տեսնի: Գիտակցությունը կարող է այնպիսի աստիճանի ձուլվել ստրկամիտ հետևողականությամբ, որ յուրաքանչյուր նոր գիտելիք հանցագործություն կամ խելագարություն կթվա: Միթե՞ կարող է իրականությունը հանդուրժել անգրագետ սահմանափակումները:

82. Բազմիցս է ասվել կամքի կարգապահության և գիտակցության հրամանի մասին : Պատասխանատվության եռանդը վաղուց հաստատված է, այժմ զգոնությունը պետք է ուղղված լինի աղանդավորության և սնահավատության նեղությունը արմատախիլ անելուն: Աղանդավորը երազում է իշխանություն վերցնել, որպեսզի ամեն ինչ ստորադասի իր անկայուն գիտակցությանը: Սնահավատը ամենից շատ վախենում է պատահական շարժումով ուրիշի նշանը հիշեցնելուց և բավականին շատ է մտածում իր մասին: Սնահավատությունը և աղանդավորությունը շատ ցածր գիտակցության նշաններ են: Ստեղծագործական ներուժն աննշան է, ում համար խորթ է զսպման սկզբունքը: Անհրաժեշտ է ամեն կերպ սնահավատությունն ու աղանդավորությունը բացահայտել: Մի ամչեք կանգ առնել այս հարցերի վրա ՝ դրանով իսկ ոչնչացնելով ստերն ու վախը: Սնահավատությունը կարող է դուրս մղվել միայն մարդու մեջ բնածին ուժերի պաշտամունքով:

83. Համագործակցությունը բոլոր հնարավորությունների և բոլոր կուտակումների

շտեմարանն է: Ով նսեմացնում է համագործակցության սահմաններն ու ուժը, դառնում է դավաճան: Համագործակցությունը արևային ուրախության բաժակ է!

84. Պետք է ուշադրություն դարձնել տարբեր համաճարակների սաղմնավորմանը: Այս կամ այն ընդհանուր հիվանդության դրսևորումն արտացոլվում է ընդհանուր գիտակցական ուժերի վրա: Թունավորումը թափանցում է ավելի խորը, քան մարդիկ կարծում են, և վերածնվում և ստեղծում նոր մանրէներ: Ֆիզիկական և հոգեկան համաճարակները շատ աղետալի են: Ամբողջական տոհմերի բազում այլասերումներ առաջանում են նմաններից:

85. Որոշ միջատներ և սողուններ նախընտրում են մահանալ, միայն թե խայթեն և թույն ներարկեն: Նույն կերպ խավարի ծառաները պատրաստ են ամենատհաճ հետևանքների, միայն թե թունավոր չարիք ստեղծեն: Պետք է ամուր հիշել այս չարագործներին, ովքեր երբեմն իրենց չեն խնայում չար գործերի համար: Բազմաթիվ օրինակներ կարելի է տեսնել, երբ մտահղացված չարիքը չէր կարող օգտակար լինել հենց չարագործին, բայց, այնուամենայնիվ, խավարիչների ոգեշնչման ներքո, այն արտահայտվել է: Մութ ուժերի հնարքները պետք է բացահայտվեն. Օրինակ՝ երբեմն որոշ մարդկանց կամ կենդանիների դիակներ են հայտնվում հայտնի վայրերի մոտ: Խավարասերները գիտեն, որ ստորին ոլորտների ուժեր հրապուրելու համար անհրաժեշտ է քայքայում, և նրանք հնարամտորեն կազմակերպում են տարրալուծման նման կենտրոններ: Այդ իսկ պատճառով վաղուց խորհուրդ էի տալիս տանը չպահել քայքայված մսամթերք ու փչացած բույսեր, ինչպես նաև հոտած ջուր: Մարդիկ հազվադեպ են ուշադրություն դարձնում նման փաստերին, ինչը հաստատում են անգամ ժամանակակից բժիշկները:

86. Մարդը պետք է անընդհատ զտնվի ապագայի շեմին: Մարդն նոր է ամեն ակնթարթում : Մարդը չի կարող հաստատվել անցյալի վրա, քանի որ այն այլևս գոյություն չունի: Մարդը կարող է իմանալ անցյալը, բայց վայ նրան, եթե ուզում է կիրառել անցյալի միջոցները: Թող Առաջնորդը հիշի, որ անցյալը անհամատեղելի է ապագայի հետ: Նոր համակցությունների գիտակցության իմաստությունը կապում է անցյալը ապագայի հետ: Հեշտ չէ անընդհատ համարձակորեն իմանալ, որ ամեն պահ նորոգում է աշխարհները, բայց այս աղբյուրից է ծնվում անսպառ կենսուրախությունը: Առաջնորդը կարող է հավաքել Իմաստունների Խորհուրդ, բայց այնտեղ չի զա խեղճացած ոգով՝ դեմքով շրջվելով դեպի անցյալը: Ապագայի Լույսը Հիերարխիայի Լույսն է :

87. Առաջնորդը պետք է բարի գործերը ամրապնդի ժողովրդի գիտակցության մեջ : Նա պետք է իր տրամադրության տակ ունենա բոլոր լավ ուղերձները տարածելու բոլոր միջոցները: Առաջնորդի յուրաքանչյուր լռություն կլցվի չարությամբ, որը բարու յուրաքանչյուր նախանջն է հետապնդում : Հարկավոր է ճանաչել հիմքերի այս շարժումները, որպեսզի մշտական դետքում լինի. Առաջնորդը հոր պես վերաբերվում ժողովրդի հետ: Այսպես կարելի է նորոգել աշխարհների համահնչությունը:

88. Իհարկե, երեց-վարդապետները, ինչպես Ալթայի քույրերն ու տարբեր գիտելիքների, արվեստի ու արհեստի տեր ուսուցիչները, լուսավորության շարժուն ռազմիկներն են: Տեղացի ուսուցիչները նրանց մեջ կգտնեն լավագույն ուղեկիցներին: Նրանք կվառեն հրճվանքի և ոգեշնչման կրակները: Տեղի ուսուցիչները առարկայի նկատմամբ իրենց ողջ ջանասիրությամբ կրում են առօրյա կյանքի լուծը: Նրանք իրենք ուրախ կլինեն տեսնել հյուր-վարդապետներին: Գալիքի հենց անսպասելիությունը ներկայացնում է այն անսովորությունը, որին ձգում են սրտերը: Պանդուխտ-ուսուցիչներն ճաշակում են հրաշալի բազմազանությունը, որը նորոգում ու բազմապատկում է ուժը : Առաջնորդն ինքը երբեմն մասնակցում է այս լուսավոր ուխտագնացություններին: Իհարկե, հաճախ ուսանողներն էլ են գալիս Երեցների և Քույրերի Կացարաններ: Պետք է լավ լինի Կացարաններում: Կարելի է ձևավորել իրական հոգևոր և աշխատանքային լուսավորության օջախներ: Թող գիտելիքները հաստատվեն ամենասրտանց, գրավիչ միջոցներով:

89. Առաջնորդը պետք է անձամբ մասնակցի Տպագրության գործի Խորհրդին: Խորհուրդը կազմված է Հրատարակչության ներկայացուցիչներից: Նրանք զոեհկության ու ստի վտարման մարտահնոցում են: Այս հանցագործությունների մեջ երեք անգամ դիմակազրկվածները զրկվում են հրատարակչի իրավունքից: Խորհուրդն ինքն է նաև հետևում հրապարակումների լավ արտաքին տեսքին և հոգում մատչելի գների մասին:

Նրանք նաև հետևում են, որ մեծ քանակությամբ օգտակար թռուցիկներ թափանցեն ժողովրդի մեջ: Նույնիսկ եթե փաթեթավորման թուղթը պարունակում է օգտակար խորհուրդներ. Անշուշտ , Հրատարակչությունները կազմավորում են Կոոպերատիվ:

90. Կաշառքը պետք է անպայման արմատախիլ արվի ցանկացած գնով, սակայն պատժիչ միջոցների վրա հույս դնել չի կարելի: Դրանք այնքան էլ օգտակար չեն, պետք է դպրոցներում էթիկայի դասերի շարքում հաստատել այն միտքը, որ կաշառքը. անհարիր է մարդու արժանապատվությանը: Իհարկե, Կոոպերատիվը ևս դուրս կթողնի նրանց, ով կնշմարվի կոռուպցիայի մեջ: Ինքը՝ Առաջնորդը, պետք է ուշադիր հետևի, որպեսզի տեսնի, թե արդյոք չեն երևա նման քայքայման նշաններ : Կոռուպցիայից հետո ոչ պակաս ամոթալի է պարտականություն չկատարելը. Բայց այս հանցագործությունն այնքան է կլանված վաղ տարիքից, որ ազդեցությունը հնարավոր է միայն վաղ տարիքից: Թող երեխաները սովորեն մեծահասակների աշխատանքը : Աշխատանքի որակի վրա կհառնի նաև պարտքի զգացումը: Յուրաքանչյուր անփութություն, մոռացկոտություն և խուսափողականություն կարող է դատապարտվել միայն սեփական սրտում:

91. Վախն անհամատեղելի է Առաջնորդ հասկացության հետ: Վախի յուրաքանչյուր դրսևորում արդեն իսկ Առաջնորդի նկատմամբ հարգանքի ոչնչացում է : Նա չի կարող ցույց տալ շփոթություն կամ շեղում : Վախը ստիպում է նույնիսկ խելացի մարդկանց մեծացնել իրենց շուրջը պահնորդներին: Բայց Առաջնորդը ոչ մի պահակի կարիք չունի: Նա կարող է շրջապատված լինել անձնակազմով և օգնականներով: Վախի երևույթը կործանել է բազում պետություններ: Սարսափը՝ ամենավարակիչ հասկացությունն է: Կարելի է պատկերացնել, թե ինչպես է Առաջնորդը վարակվում սարսափով, միթե՞ այդ դեպքում կարելի է պատկերացնել Հիերարխիայի հետ հաղորդակցություն: Ժողովուրդները զգայուն են այն ամենի նկատմամբ, ինչում մեղավոր են, իհարկե, առաջին հերթին՝ վախի նկատմամբ: Ժողովուրդները կարող են հարգել քաջությունը նույնիսկ ամենատարօրինակ ձևերով: Բայց վախն ու անվճռականությունը չեն ներվի, բացի այդ, վախի յուրաքանչյուր դրսեւորում կտրում է արծաթե թելը:

92. Անշուշտ քաջությունն է, որը կարող է ընկած լինել սերմի մեջ և երբեք չբացահայտվել որպես լուսավոր զրահ: Բայց երբ մեր գիտակցությունն ամբողջությամբ տեղափոխվում է Շրջան, որտեղ չկա վախ և հուսահատություն, ապա մենք անխոցելի ենք կեղտի համար: Պետք է հասկանալ, թե որտեղ է մեր ամրոցը և շտապել այնտեղ՝ առանց շեղվելու: Այսպես կարելի է ամրապնդել քաջությունը:

93. Առաջնորդը երբեք մի տեղ չի հավաքում բոլոր ուժերը. դրանում է կայանում անպարտելիության գլխավոր պայմաններից մեկը: Բայց ոչ միայն Առաջնորդի ուժերը տարբեր տեղերում են գտնվում, այլև նրանք երբեմն տեղափոխվում են: Ուժեր տեղաշարժելու Առաջնորդի հրամանը կախված է հենց իրենից: Մարդիկ երբեմն գիտեն ուժերի տեղաշարժման մասին, բայց գիտեն նաև, որ շատ բան է տեղի ունենում իրենց իմացությունից դուրս: Այսպիսով, Առաջնորդի ՈՒժերը զանգվածայնացման ենթակա չեն: Ընդ որում, հայտնի է, որ թեև զազեր չեն օգտագործվում, բայց կան որոշ ճառագայթներ, որոնք կարող են գործել անսխալ: Չի կարելի նաև թաքցնել , որ հոգեկան էներգիան ավելի մեծ պաշտպանություն է ներկայացնում, քան գազերը: Բայց այդ էներգիաների օգտագործումը միայն լիովին վստահելի մարդկանց ձեռքում է: Նրանց կողմից ցանկացած դավաճանություն բացառվում է, քանի որ նույն էներգիան կարող է հակառակ ազդեցություն ունենալ: Այսպիսով, Առաջնորդի պաշտպանությունը կստանա բոլորովին նոր հարթություն: Չմոռանանք, որ Հիերարխիայի հետ շփումը, անշուշտ, զգուշացնում է վտանգի մասին. Հոգեկան էներգիայի ուժերի դրսևորումը ամենադիմացկուն զրահն է, մարդիկ իզուր են օգտագործում «ինտուիցիա» ծիծաղելի բառը, որտեղ կա ավելի բարձրագույն զգայազգիտելիք:

94. Առաջնորդը պետք է ինքնապաշտպանվի իր հրամանագրերի չեղյալ հայտարարումից: Նման տատանումները կհանգեցնեն նույն դժբախտություններին, ինչ վախը: Հարգանքն անուղղելի կլինի, քանի որ Առաջնորդը չի կարող հույս ունենալ, որ այսօրվա սխալը վաղը կարող է շտկվել: Սխալներ չպետք է լինեն: Դուք կարող եք հետաձգել հրամանագիրը, բայց կարգի դրսևորումը օրենքն է:

95. Սովորաբար մարդիկ սխալվում են՝ հենվելով գիտակցության սահմանափակության վրա, որ առարկան կարող է գոյություն ունենալ միայն մեկ ձևով: Ուստի նրանք չեն կարող պատկերացնել, որ հին ժամանակներում մարդիկ կարող էին օգտագործել տարբեր էներգիաներ , բայց դրանք կիրառում էին բոլորովին այլ կերպ: Մարդիկ մոռանում են նաև, որ իրենք, լքելով իրենց տները, ոչնչացնում են շատ առարկաներ, ուստի իմաստուն Վարդապետները միջոցներ են ձեռնարկել ժամանակին թաքցնելու այն, ինչը չպետք է ցուցադրվեր սահմանված ժամկետից շուտ: Նոր բացահայտումներ, արդյո՞ք կարող են դրանք հրապարակել ժամկետից շուտ: Նման չարտոնված փորձերից հիմքը կարող էր սասանվել: Միթե՞ Հիերարխիան չի մասնակցում բացահայտումներին: Զգիտե՞ք, որ շատ ժամանակավրեպ հայտնագործություններ Մեր կողմից ոչնչացվել են վնասակարության պատճառով: Թող Առաջնորդը հիշի, որ Առաջնորդ Ձեռքը հանգիստ չի ճանաչում՝ հետևելով Բարու հնարավորությունների լարին:

96. Իսկապես, շքեղությունը պետք է հեռանա նոր շինությունից, մանավանդ որ շքեղությունը չի համապատասխանում ո՛չ գեղեցկությանը, ո՛չ գիտելիքին: Բայց շքեղության սահմանները ոլորապտույտ են, դրանք մեկ օրենքով հնարավոր չէ սահմանել: Առաջնորդը պետք է իր վրա վերցնի նաև այս ծանր պարտականությունը: Նա կարող է ամբողջությամբ ոչնչացնել ցանկացած գռեհկություն, որը շքեղության ուղեկից է: Առաջնորդը կարող է լսել լավագույն փորձագետների կարծիքը, բայց նա է ընդունում որոշումը:

97. Գեղեցկության մասին ճանաչողությունը բարձրացնելու նպատակով դպրոցներում հիմնվում է կյանքի գեղեցկության ուսումնասիրություն: Արվեստի և Գիտելիքի պատմությունը կներառվի այս առարկայի մեջ, քանի որ այն պետք է վերաբերի ոչ միայն նախկին ըմբռնումներին, այլև պարունակի ժամանակակից նվաճումների ցուցումներ: Այս առարկայի ղեկավարը պետք է իրոք կրթված լինի, որպեսզի խուսափի բոլոր այլանդակություններից, որն իր մեջ պարունակում է տգիտության հատիկ:

98. Առեղծվածով է ապրում աշխարհը. ինչպես Բարձրագույն Առեղծվածն է անբացահայտելի, այնպես էլ ամեն լարվածության մեջ առեղծվածի տարր կա: Մարդիկ իրենց սրտում զգում են այս առեղծվածի սահմանը և ընդունակ են հարգել այն: Պետք չէ գաղտնիքներ հորինել, այլ պետք է պատվել այն, դրանում կլինի մարդկային անձի արդարացումը: Առաջնորդի մտադրությունների էությունը առեղծված է, բայց նրա գործողությունների դրսևորումը ժողովրդի բարիքն է:

99. Կարելի՞ է ակնկալել, որ պետության խախտված բյուջեն առանց հատուկ միջոցների կհասնի հավասարակշռության: Ոչ թղթադրամների թողարկումը, ոչ վարկերը չեն օգնի ու միայն խորքը կմղեն հիվանդությունը: Նշանակում է, որ պետք է ուշադրություն դարձնել բնակչության և նրա ուժերի ճիշտ բաշխմանը: Հրեշավոր քաղաքները, որպես անառակության ու հիվանդությունների թարախակույտեր, պետք է ավելի ճիշտ բաշխել, որպեսզի հավասարակշռությունը չխախտվի: Ամբոխների խռնվելը ու անապատների առկայությունը չպետք է սասանի կյանքի : Պետք է այնպես անել, որ բնության մեջ կյանքը հասկանալի և գրավիչ դառնա: Նորագույն հայտնագործությունները թույլ են տալիս նույնիսկ հեռավոր վայրերում օգտվել մշակութային նվաճումներից : Երբ դպրոցը բացատրում է, որ **կյանքի իմաստը ինքնակատարելագործումն է**, կավելանա դեպի բնություն մարդկային հոսանքը: Կոոպերատիվները ևս հնարավորություն կտան վերադառնալ լավագույն արհեստագործական արտադրությանը: Նույն կոոպերատիվները կօգնեն պետությանը պահպանել բյուջեի հավասարակշռությունը: Կոոպերատիվների ի հայտ գալը պետությանը թույլ կտա նրանց վրա դնել ծախսերի զգալի մասը, օրինակ՝ կապի գծերի սպասարկումը, անտառտնտեսության և ջրի հետ կապված հարցերը, բուժմիավորումը, ներքին պահապանները և բազմաթիվ հոդվածներ, որոնց կարիքն ունեն կոոպերատիվները: Իհարկե, դպրոցներն ու զվարճանքի հաստատությունները պահվում են կոոպերատիվների կողմից՝ պետության վերահսկողության ներքո: Նաև կոոպերատիվներն իրենց բնույթով օգնում են անուղղակի հարկերի հարցում: Ուղղակի, գլխահարկը չպետք է մեծ լինի, քանի որ այս հանգամանքը միշտ դժգոհության պատճառ է լինելու: Բայց անուղղակի հարկը գալիս է այնքան շատ ապրանքներից, որ այն այլևս տեսանելի չէ աչքին: Կոոպերատիվները ծածկում են Պետության բոլոր տարածքները և բազում աշխատողների փոխարեն միայն պահանջում

են վերահսկողություն :Բարձրագույն Տնտեսության Խորհուրդը բաղկացած է հենց Առաջնորդի ղեկավարությամբ: Այսպես է կառուցվում ամբողջ Պետության շենքը մեկ Գագաթով:

100. Առաջնորդի հետ յուրաքանչյուր զրույց պետք է խրախուսվի: Սպառնալիք կամ նսեմացում անթույլատրել է: Յուրաքանչյուրին, նույնիսկ ոչ մեծ ծառայողին, կարող են աջակցել իր լավագույն որակով: Նույնիսկ փոքրերը կարող են օգտակար դիտողություն կատարել. և մարդկային սիրտն ուրախանում է, երբ զգում է, որ գնահատվում են նրա լավագույն հատկությունները:

101. Նրանց համար, ովքեր չեն կարողանում ըմբռնել Առաջնորդի գաղափարը, օրինակ, ձեր ասած յուրաքանչյուր բառը ենթադրում է ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի առաջնահերթությունը: Դուք ինքներդ չեք նկատում, որ ձեր յուրաքանչյուր պնդում հիմնված է ինչ-որ մեկի կողմից հաստատված ինչ-որ բան գտնելու վրա: Չկա մարդ, ով կարող է շրջանցել ուսուցումը: Միայն կարիք չկա սրտի խորքում մեծամտանալ: Հիերարխիայի ըմբռնումը կօգնի հաստատել Առաջնորդի երևույթը, ով Բարձրագույնի համեմատ Առաջնորդ չէ՝ այլ հետևորդ:

Մարդիկ տգիտության ազդեցության տակ երբեմն փորձում են ճոպանները կտրել, բայց ամեն նավաստի կասի, որ կայմերը կտրվում են, երբ տարերքները հաղթահարում են մարդու ուժը: Նույն նավաստին գիտի, որ առանց կայմերի և պարանների նավագնացությունն աղետալի է: Սա նշանակում է, որ կրթության միջոցով անհրաժեշտ է հաստատել Հիերարխիայի անխուսափելիությունը ողջ Տիեզերքում:

102. Յուրաքանչյուր գյուտարար և գիտնական պետք է զգա, որ իր հայտնագործությունը պաշտպանված է Պետության կողմից: Անհրաժեշտություն չկա , որպեսզի գիտնականը էներգիա վատնի գյուտը ցանկապատելու վրա, ինքը Պետությունը պարտավոր է իր վրա վերցնել ոչ միայն պաշտպանության հոգսը, այլև լայնորեն կիրառել օգտակար հայտնագործությունները: Ինքը գյուտարարը պետք է խրախուսվի պետության կողմից և դրվի բարենպաստ պայմաններում աշխատանքները շարունակելու և բարելավելու համար: Անթույլատրելիէ, որ ստեղծագործող ուժերը անհանգստանան ձևականությունների հիմարության մեջ: Առաջնորդն ինքը պետք է իմանա, թե ուր ուղղորդել ժողովրդի ստեղծագործ ուժերը: Այսպիսով, կյանքը բարելավողի աշխատանքային միավորը արդարացի կգնահատվի:

103. Դասերը, որպես պայմանականության արտահայտություններ, չեն կարող գոյություն ունենալ Նոր աշխարհում: Զինվորական դասը վերածվում է ընդհանուր պաշտպանության, որը վճռականորեն բաշխվում է բոլորի մեջ: Դպրոցը սովորեցնում է անհրաժեշտ պաշտպանության հնարքներ:

104. Բանավոր հրամանը մնում է կյանքում, անգամ եթե մարդկությունն ունենար հազարավոր գրավոր լեզուներ: Դրա համար կա երեք պատճառ. նախ՝ այն միշտ չէ, որ ենթակա է գրավոր պատկերման. երկրորդը՝ մարդիկ քիչ ուշադրություն են դարձնում՝ հենվելով գրի վրա. երրորդ - ամենաբարձրագույն Ուխտերի դրսևորումը երբեք չի գրվում, հետևաբար շուրթերը սրտից սիրտ խոսում են բարձրագույն Հրամաններով : Նմանապես, Առաջնորդն իր սրտում պահում է Տիրակալի հրամանը և իր հերթին նման հանձնարարական տալիս է բանավոր: Նման պարզ նկատառումն այնուամենայնիվ կարիք ունի ընդծման, քանի որ եթե որևէ մեկը չգիտի Հիերարխիան, նա չի հասկանա Հրամանի սրբությունը: Բնության օրենքների մասին շատ հրահանգներ են պահանջվում՝ հասկանալու համար ձգողության օրենքի ողջ գեղեցկությունը, որն ընկած է Հիերարխիայի հիմքում: Թերուսները չեն հասկանում, որ ստրկություն ու ազատությունը պառկած են . առաջինը խավարում, իսկ երկրորդը Հիերարխիայի Լույսում:

105. Խոշտանգումները և բռնությունը կարելի է ընդմիշտ բացառել: Նման մութ միջոցներ պետք չեն այնտեղ, որտեղ կա հոգեկան էներգիայի իմացություն: Դատարանը ֆիլմի վրա նշում է դատապարտյալի ներքին վիճակը: Խոստովանությունը վերահսկվում է պայծառատեսությամբ: Դատապարտյալն ինքը հրամանագրով կասի ճշմարտությունը, որին ոչ մի կամք չի կարող չհնազանդվել: Այսպիսով, հոգեկան էներգիան կդառնա առօրեական: Իհարկե, Լուսատուների Գիտությունը կօգնի ճշտել Ճշմարտությունը:

106. Իսկապես, ոգու նկատմամբ հարգանքը կաճի:Մենք պետք է արմատախիլ անենք անաստվածությունը: Բանն այն է, որ ավելի լավ է պահպանել Հիերարխիայի գիտելիքի գոնե բեկորները, նույնիսկ պայմանական ձևերով, քան վերադառնալ քաոսի անդունդ: Երբ մարդիկ լսել են Բարձրյալի անմատչելիության մասին, սկսել են ընդհանրապես տապալել ամեն անտեսանելին : Հետևաբար, Իմ Հրամանով անաստվածություն կհալածվի, որն ընդունել է ամանաբացահայտ սատանայության տեսք:

107. Մահապատիժը վերացվում է, զի ավազակներ ոչնչացումը մարտի ժամանկ պատիժ չէ: Շատ հանցագործներ կդիմեն աշխատանքի՝ ներշնչքնաի ազդեցության տակ: Բացարձակապես, ինչպես հարբեցողությունն ու այլ արատները, այնպես էլ հանցավորության հիվանդությունները կարող են բուժվել կամային հրամանով : Նաև չպետք է մոռանալ, որ շատ հանցագործություններ կատարվում են մոլուցքի ազդեցության տակ: Սա նշանակում է, որ նման մարդկանց պետք է բուժել, և ոչ թե պատժել: Անշուշտ, նման բուժման դեպքում որոշիչ նշանակություն ունի համակարգված աշխատանքի ավելացումը: Յուրաքանչյուր աշխատանք ատելի է այսահարների համար: Նրանք փորձում են սուզվել քաոսի մեջ , բայց աշխատանքի էությունն արդեն դրսևորում է:

Պետք չէ վրդովվել այն նկատառումից, թե որտեղից են գալու ուժեղ ներշնչանքները, դրանք շատ են, բայց դրանք ցրված են: Երբ կհաստատվի Հոգեկան էներգիայի հաստատությունը, այն կհավաքի շատ օգտակար համագործակիցներ: Չպետք է մոռանալ, որ Աստղագիտության հաստատությունը լինելու է տվյալների ստուգման մերձավոր օգնականը: Ոչ վաղ , կառավարությունները ամաչում էին և՛ երկնային մարմիններից, և՛ մարդկային զորությունից, բայց հոգևոր էներգիան պետք է գրավի լուսավոր մարդկանց ուշադրությունը:

108. Առաջնորդը պետք է մշտապես եռանդուն լինի, որպեսզի ոչ ոք նրանից չստանա հուսահատության ճառագայթում: Բայց այդպիսի եռանդ կարելի է հաստատել միայն Հիերարխիային նվիրվածությամբ, երբ շփումը սրտանց է: Այդպիսի Աղբյուրից բարյացկամություն է ստեղծվում, որը բացում է ամենադժվար դարպասները: Դուք պետք է ձեր առջև ունենաք Հիերարխի Պատկերը, որպեսզի բոլոր դեպքերի համար բարյացկամության հիմք գտնեք: Պետք է իմանալ Դիցապետի Հրե Սուրը, որպեսզի իմանալ արդարության սահմանը: Ո՞վ կասի, երբ են սպառվում բարյացկամության բոլոր միջոցները: Միայն Հիերարխը կարող է այդպիսի որոշման պատասխանատվությունը կրել : Դուք գիտեք, որ այդպիսի օրինակ տրվել է ամենախաղաղ Նկրտողի (Ճգնավորի) կողմից:

109. Առաջնորդն առօրյա աշխատանքը հասկանում է որպես հավերժության ակնթարթ: Նա չի կարող ուժասպառվել տեսնելով բնաշրջության դանդաղությունը: Մարդկային ժամացույցի վրա ժամանակը շատ է, բայց Առաջնորդն ապրում է այնտեղ, որտեղ չափանիշներն այլ են, հետևաբար նրան անհրաժեշտ է կարողանալ բարեբեր օգնել հետ ընկածներին և առաջ անցածներին: Միայն Գերակարգության (Հիերարխիայի) հետ շփումն է Առաջնորդին տալիս Երեք Աշխարհների չափանիշները: Այս Սկզբնաղբյուրից է ստեղծվում Առաջնորդի անխոնջությունը: Մարդկային ուղեղը չի կարող արմատավորվել մշտնջենական աշխատանքի մեջ, միայն Գերակարգության անսպառ Հզորությունն է ուղարկում զորացման և աշխատանքի իմաստի ճանաչման ճառագայթներ : Առանց Գերակարգության, Առաջնորդը միայն խոտի ցողուն է մրրիկի մեջ: Հավաքել Հրե Աշխարհի ճառագայթները՝ նշանակում է անձնական զրահ կռել :

110. Գյուղատնտեսության , արհեստների և ստեղծագործության մեջ պետք է զարգացնել անհատականությունը: Կոոպերատիվը անհատի խթանողն է, բայց ոչ ստրկացնողը: Միայն համագործակցության տգետ ձևերում կարելի է տեսնել անհատի ստրկությունն ու ժխտումը: Ինչպես դահիճը չգիտի կտրված գլուխների մտքերը, այնպես էլ իրենց կոոպերատիվ երևակայող տգետները ոչնչացնում են ստեղծագործ ուժերը: Դահիճը միշտ արհամարհված է եղել, այդպես էլ կարհամարհվի մտքերի դահիճը: Առաջնորդի կոչերում ոչ թե նվաստացում, այլ վերելք կինչի: Առաջնորդի երևույթն արդեն իսկ ժողովրդի ուժերի սթափվելու խորհրդանիշ է:

111. Առաջնորդը կարող է հայտնվել երիտասարդությանը, և նրա յուրաքանչյուր հայտնվելը տոն կլինի: Նա կառաջարկի խանդավառող գործեր, նա ցույց կտա, որ անգամ

մանուկը կարող է օգտակար լինել Պետությանը. նա կճանաչի ու կգնահատի հերոսության յուրաքանչյուր հատկանիշ: Առաջնորդն ինքը կգրի մանուկ հերոսների անունները, զի հերոսությունն արդեն ոգու մեջ է: Երբևէ չի եղել, որ վախկոտը դառնա գիտակից հերոս: Դպրոցական տարիներից անհրաժեշտ է ուրվանշել հերոսների կաղրերը և պահպանել անձնազոհության այս կրակները: Ոչ ոք չի նկատում, թե ինչպես են արտահայտվում մարդկային էության հիմնական հատկանիշները: Շատ հաճախ մարդիկ ստորացրել են հենց ամենաարժեքավոր հակումների սաղմերը: Նոր Հարյուրամյակը, առաջին հերթին, կխնայի ժողովրդի ուժը:

112. Առաջնորդը չպետք է պատասխանատու պաշտոնների նշանակի չարացած մարդկանց. Պետք է շատ զգուշանալ նման հատկությունից, քանի որ չարությունը սահմանափակություն է: Իհարկե, սահմանափակվածությունը, որոշ չափով, կարելի է բուժել այնպես, ինչպես և չարությունը: Երկու հատկություններն էլ ենթարկվում են ներշնչանքի, բայց նման վերափոխությունը ժամանակ է պահանջում: Սարսափելի վնաս է առաջանում չարությունից, քանի որ անհաղթահարելի խոչընդոտ է ընկնում այն մարդու բոլոր գործողությունների վրա, ով ընկել է չարության մեջ:

113. Քնած ժամանակ Առաջնորդը չի ծնվում, բայց ճգնումների ու դժվարությունների օրերն են ստեղծում Առաջնորդին: Նա, որպես շարժման խորհրդանիշ, ժողովուրդներին տանում է դեպի բերրի հող: ՈՒր ուղարկվում է Առաջնորդը, այնտեղ Ավետյաց Երկիրն արդեն բացահայտված է: Ուստի Առաջնորդի հայտնվելը լավ նշան է և հաջողության նշան, թաղումից ետ քաշվելու և Լույսին մոտենալու նշան է: ՈՒրեմն երբեք չզղջանք քնելու ժամանակի համար, երբ մեզ ուղեկցելու տեղ չկա: Թող Առաջնորդը ժողովրդին ազդարարի էներգիա , որն էականորեն տալիս է Լույսի Գերակարգությունը: Առաջնորդն արգելող խոսք չի ասի. որտեղ կանխորոշված դարպասներն են, ժողովուրդը կգտնի կարիքների պատասխանը, և դա դատարկ խոստում չի լինի, քանի որ Գերակարգությունը դատարկություն չի ճանաչում: Այսպիսով, եկեք շնորհակալություն հայտնենք, երբ քնկելու ժամանակի փոխարեն տրվում է արևածագի ժամանակը:

114. Առաջնորդը հավաքում է համագործներ բազում փորձություններով : Առաջին հերթին նա կխնդրի փորձվողին նկարագրել մի հանգամանք. Եթե ուղերձը սկսվում է հերքումով, ապա աշխատողը պիտանի չէ, քանի որ յուրաքանչյուր երևույթ իր մեջ օգտակար բան է պարունակում: Բայց կա հատուկ աչք, որը կտարբերի յուրաքանչյուր լավ հատիկ: Պետք է ընտրել այդպիսի հեռատես համագործների : Առաջնորդը չպետք է ընկղմվի ժխտության գայթակղության մեջ.

115. Մուրացկանությունը լիովին անթույլատրելի է. Յուրաքանչյուր Կոոպերատիվ իր տարածքում հոգ է տանում, որ աշխատանք տրվի բոլորին: Միայն տկարներն են ապրում Գթասրտության Տներում, բայց քչերն են անճարակ , որ լրիվ զրկված լինեն իրենց աշխատանքից: Աշխատանքների բազմազանությունն անսպառ է, պարզապես աշխատունակություն գտնելու համար պետք է հնարամտություն ունենալ:

116. Նմանապես, Առաջնորդն ունի համագործներին նպատակահարմար տեղափոխելու կամ նրանց բարեհաճությունը մեկ տեղում պահելու մտահոգություն: Պայմանական ժամկետներ դնել հնարավոր չէ, ամեն ինչ պետք է կախված լինի նպատակահարմարությունից:

117. Առաջնորդը միշտ պետք է իր առջև վերջնական նպատակ ունենա: Շատ ձեռնարկումներ կործանվեցին միայն հիմնական նպատակի կորստով: Առօրյա կյանքը ջնջեց Աստվածատուր առաջադրանքները, իսկ մարդկային խնդիրները բազմապատկվեցին՝ ոչնչացնելով տիեզերական չափերը: Պետք է հասկանալ, որ միայն Հիերարխիայի հետ շփումը կարող է սովորականից վեր պահել ոգու վերելքը: Կյանքի մանրամասներից հնարավոր չէ խուսափել, բայց դրանք կարելի է ծածկել ոգու ճառագայթների ծիածանով: Թող Առաջնորդը հիշի, որ գլխավոր խնդիրը ժողովրդի ինքնակատարելագործման մեջ է, երբ հասկացվում են Երեք աշխարհների գանձերը:

118. Պետք է խուսափել բոլոր արգելքներից և դրանք փոխարինել ժամանակին ուղղված հրամանագրով: Ավելի լավ է հնչում, երբ Առաջնորդն կասի՝ գործեք , ստեղծեք , քան արգելում եմ: Յուրաքանչյուր ժխտում ոչնչացնում է Առաջնորդի հանդեպ հարգանքի մի մասը, սակայն,

իրականում, Հրամանագիրը կարող է կենսական նշանակություն ունենալ միայն ժամանակին լինելով: Բայց ի՞նչը, բացի Գերակարգից, կարող է ընկալել այժմեականը: Ուստի Առաջնորդի ուժի մարգարիտը միայն Գերակայի հետ հաղորդակցության մեջ է: Դուք չեք կարող հալեցնել այս մարգարիտը, քանի որ քայքայվելիս այն թույն է արտադրում: Պետք է պահել տրված մարգարիտը որպես միակ անփոխարինելի գանձ: Պատկերացնենք, որ Առաջնորդը կիրաժարվի Հաղորդակցությունից, այնժամ նա անմիջապես կդառնա ամենասովորական մարդ, և պատռված թելը նրան կշպրտի շատ հետ:

119. Կարելի է ճանաչել Բարձրագույն ուժը, երբ այն գործում է փոխադարձաբար, որպես հավասարագործող արդյունք: Փոխադարձության հասկացությունն ամենաանհրաժեշտն է. վահանը դրսևորվում է միայն այն դեպքում, երբ ուժերը միավորվում են: Բայց Առաջնորդը պետք է ուղղի իր սիրտը այնպես, կարծես Գերական անմիջապես իր կողքին է:

120. Բարձրագույն ՈՒժերի գիտակցումը տրվում է ոչ դպրոցում, ոչ դրսից, այլ անշուշտ, այն ապրում է սրտում՝ լինելով Նուրբ Աշխարհի կյանքի ամենահիմնական հիշողությունը: Կարելի է ասել՝ օրհնված եղեք, ովքեր իրենց սրտում պահել են Ամենագեղեցիկը: Մարդկության ամպերը ամենաանհրաժեշտի մոռացությունից են: Գիշերը տրվել է որպես ոգու բարձրացում, բայց մարդիկ անտեղյակությամբ ասել են՝ քունը նման է մահվան: Հրաշք առեղծվածը քայքայման հետ համեմատելը անհեթեթ է: Վաղ տարիքից պետք է կրկնել, որ երազը կոչվում է զրույց Հրեշտակների հետ: Երբ խոսքերի կարիք չկա, ապա սկսվում է սրտի իմացությունը:

121. Վերահսկողությունը պետք է լինի շատ զգոն, բայց այն չպետք է արտահայտվի իբրև անվստահության նշան: Վերահսկողությունը պետք է փոխակերպվի համագոր-ծակցության և փոխիրազեկվածության: Վստահության ամրապնդման միջոցառումները, որակի մանրակրկիտությունը պետք է իրականացվեն վերևից ներքև: Շատ օգտակար գործողություններ զրպարտվել և ոչնչացվել են միայն վերահսկողության նկատմամբ ատելությունից: Իհարկե, անտեղյակությունը կլինի նման աննպատակահարմարության պատճառը, բայց երբ մարդիկ հասունանան Նուրբ և Կրակոտ Աշխարհի համար, նրանք կհասկանան հարաբերությունների անվերջությունը: Իսկապես, ո՞վ է գտնվում Հիերարխիայից դուրս:! Միայն անգրագետները կամ գիտակից խաբեբաները կարող են մթագնել Հիերարխիան տարբեր մականուններով: Բայց իրենք են կրելու ոչ թե Հիերարխիայի ազատությունը, այլ ստրկության խարանը: Առաջնորդը պետք է ժողովրդին մաքրի ստրկության բոլոր կեղևներից: Շատ վաղ տարիքից է անհրաժեշտ կրկնել ոգու կարգապահության ազատության մասին: Անհրաժեշտ է արթնացնել յուրաքանչյուր արժանապատվություն և պատիվ: Չէ՞ որ առանց պատվի մարդ չի կարող ազնիվ լինել: Չի կարելի մտածել, որ ստրկությունը կարող է հավանության արժանանալ Հիերարխիայի կողմից: Ընդհակառակը, Կրակոտ աշխարհը փնտրում է ոչ թե ստրուկներ, այլ գործընկերներ: Հաշվի առեք սրտի նրբացումը որպես պատվի չափ: Ուստի չմոռանանք, որ համաշխարհային վեհության հիմքերը դրված են հենց առօրյա կյանքում:

122. Գիրք ընթերցել՝ դեռ չի նշանակում յուրացնել այն: Առաջնորդը պետք է հասկանա, թե իր աշխատակիցները որքանով պետք է տոգորված լինեն պետության բարեկանոն կերտմամբ: Ոչ ոք չի կարող հրաժարվել աշխատանքին ուժերի ներածին չափ մասնակցելուց: Կարելի է, ըստ մարդկայնության, քիչ թե շատ իմանալ, բայց ընդհանուր աշխատանքի պատրաստակամությունը պետք է տարբերի ազգային աշխատողներին:

123. Պետք է բացահայտ հոգատարություն ունենալ Հիերարխիայի նկատմամբ: Հիերարխիան ղեկավարությունը չէ, այլ Սիրո Ամրոցը: Միայն սիրուց է ծնվում ակնածանքը, որը կարգապահություն է ստեղծում: Բայց բազում չեն նրանք, ովքեր սիրում են իրենց օգնողներին , ինչը նշանակում է, որ տգիտությունը մեծ է:!

124. Եթե տուն մտնելով տիրոջ սեղանին իժի ծնունդ նկատեք, ի՞նչ կանեք: Կմտածե՞ք, մինչ օձը կործանի ձեր ընկերոջը, թե՞ անմիջապես կորոշեք ոչնչացնել նրան: Մենք ասում ենք՝ փրկիր քո մերձավորին չարից: Մի՛ պղտորեք ձեր գլուխը շփոթությամբ, այլ գործեք հանուն բարիքի: Չի կարելի կշեռքի վրա իժ ու մարդ դնել. Անհնար է նույնացնել ստորին գիտակցությունը գիտակցության տաճարի հետ: Եթե մենք դադարենք զանազանել , ապա

